

Հոռնի Պապի Հայաստան Այցը Կը Լուսաբանեն 600 Լրագրողներ

Յունիս 24-ին Հայաստան պիտի ժամանէ Հռոմի Ֆրանցիսկոս Պապի: Այս առթիւ շուրջ 600 լրագրողներ հաւատարմագրուած են լուսաբանելու համար այցելութիւնը: Նաեւ այս առթիւ, Գիւմրիի մէջ Պապի մատուցելիք առաջին պատարագին մասնակցելու համար 15 հազար քաղաքացի արձանագրուած է Հայաստանէն ու արտերկրէն:

Այցի շրջագիծէն ներս, Երեւանի «Չուարթնոց» միջազգային օդանավակայանին մէջ տեղի պիտի ունենայ պաշտօնական դիմաւորման արարողութիւն, որմէ յետոյ Սրբազան Քահանայապետը կը մեկնի Մայր Աթոռ Ս. Էջմիածին. Մայր Տաճարէն ներս տեղի կ'ունենայ Բարիբախտեան «Հրաշափառի» արարողութիւնը:

Նոյն օրը երեկոյեան, Սրբազան Քահանայապետը Հայաստանի Հանրապետութեան Նախագահի նստավայրէն ներս հանդիպում կ'ունենայ նախագահ Սերժ Սարգսեանի, ապա՝ ՀՀ իշխանութիւններու, հասարակութեան եւ դիւանագիտական ներկայացուցիչներու հետ:

Հռոմի Պապը իր Հայաստան այցը որակած է «սիրոյ եւ երախտագիտութեան վկայութիւն»:

Սարգսեան Եւ Ալիւ Յամաճայնաժ Են Սահմանի Վրայ Աւելացնել ԵԱՀԿ Դիտորդներու Թիւը

Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախագահները Յունիս 20-ին եռակողմ հանդիպում ունեցան Սանկտ Պետերբուրգի մէջ: Բանակցութիւններու աւարտին տարածուեցաւ միատեղ յայտարարութիւն մը, ուր կողմերը վերահաստատեցին, Վիեննայի մէջ, Մայիսի 16-ին կայացած հայ-ատրպէյճանական զազաթի ժողովի պայմանաւորուածութիւնները, որոնք ուղղուած էին հակամարտութեան զօտիէն ներս իրավիճակի կայունացման եւ խաղաղ գործընթացի յառաջընթացին նպաստող միջնորդի ստեղծման:

Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութեան փոխանցմամբ, այդ նպատակով անոնք համաձայնած են մասնաւորապէս աւելացնել հակամարտութեան զօտիէն ներս միջազգային դիտորդներու թուաքանակը:

«Նրանք գոհունակութիւն յայտնեցին վերջին շրջանում չփոփոխուած հրադարարի ռեժիմի պահպանման կապակցութեամբ: Կայացաւ կարգաւորման առանցքային հարցերի շուրջ մտքերի հանգամանալից փոխանակում: Պետութիւնների ղեկավարները փաստեցին մի շարք հարցերի կապակցու-



Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախագահները Սանկտ Պետերբուրգի մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին

թեամբ փոխըմբռնման հասնելու հանգամանքը, որոնց լուծումը հնարաւորութիւն կ'ընձեռի պայմաններ ստեղծել առաջընթաց արձանագրելու ԼՂ հիմնախնդրի կարգաւորման հարցում:

Նախագահները նշեցին իրենց կանոնաւոր շփումների կարեւոր նշանակութիւնը եւ պայմանաւորուեցին շարունակել դրանք նման ձեւաչափով՝ ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի: Համանախագահները

հրաւիրուած էին ներկայ գտնուելու Սանկտ Պետերբուրգում կայացած հանդիպման եզրափակիչ հատուածին», - ըսուած էր նախագահականի հաղորդագրութեան մէջ:

Իշխող Հանրապետական կուսակցութեան խօսնակ էդուարդ Շարմազանով օգտակար եւ յուսադրող նկատեց երեք նախագահներու հանդիպումը: «Հաշուի առնելով այն հանգամանքը, որ մենք

Շար.ը էջ 4

«Փարամազի» Անուան Հրապարակի Բացումը Մոնթեվիտոյի Մէջ



Տեսարան «Փարամազի» անուան հրապարակի բացման հանդիսութենէն

Յունիս 15-ին Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթեվիտոյի մէջ պաշտօնապէս բացումը կատարուեցաւ «Փարամազի» անուան հրապարակին:

Հակառակ ձմեռնային ցուրտ եղանակին, հանդիսութեան ներկայ էին Մոնթեվիտոյի քաղաքապետի պաշտօնակատար Օսկար Քուրուշէթ, Ուրուկուէյի բթօսաշրջիկութեան նախարար Լիլիամ Քէշիշեան, Սոցիալական զարգացման փոխ նախարար Աննա Օլիվերա, Պատ-

գամաւոր Փետրօ Եստանեան, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Յակոբ Արք. Քըլընձեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հովիւ Յարէթ Պոյաճեան, Հայաստանի Հանրապետութեան պատուաւոր հիւպատոս Ռուբէն Աբրահամեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ Սամօ Սարգիսեան եւ շուրջ մեծ թիւով Ուրուկուէյացիներ:

Շար.ը էջ 8

Խորհրդաւոր Հանդիպումի Մը



Հայաստանի Հանրապետութեան Ուաշինկթընի դեսպանատան կայքէջին վրայ գետեղուած էր վերեւի նկարը ու կարճ բացատրութիւն մը, նշելով թէ, Հայկական կազմակերպութիւնները հաւաքուած են ծրագրելու համար Հայաստանի անկախութեան 25-ամեակը:

Նկարէն դատելով նշմարելի է որ, յարգելի անձնաւորութիւններու շարքին կը բացակային աւանդական երկու կուսակցութիւններու՝ ՍԴՀԿ-ի եւ ՌԱԿ-ի, ինչպէս նաեւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Այս անտեսումը զարմանալի կը գտնենք, մասնաւորապէս որ Լոս Անձելըսի մէջ գլխաւոր հիւպատոսի պաշտօնը վարած Պր. Գրիգոր Յովհաննէսեան լաւ պիտի գիտնար թէ, որոնք են այս համայնքի ներկայացուցիչները:

Մեր կարծիքով այս չէ ճիշդ գործելո՞ճը ու այս ձեւով չէ որ համայնքը պիտի համախմբուի դեսպանատան շուրջ, նշելու համար Հայաստանի Հանրապետութեան 25-Ամեակը:

«ՄԱՍԻՍ»

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սանկտ Պետերբուրգից Յետոյ Հարցերը Աւելանում Են

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ

Սանկտ Պետերբուրգում տեղի է ունեցել Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպեյճանի նախագահների հանդիպումը, որից յետոյ երեք նախագահները հանդէս են եկել յայտարարութեամբ:

Յայտարարութիւնը բաւական անորոշ, աւելի շատ ոչ թէ հարցերի պատասխան տուող, այլ հարցեր առաջացնող յայտարարութիւն է: Երեք նախագահները գոհունակութիւն են յայտնում հրադարարի պահպանման կապակցութեամբ, նաեւ յայտարարում ԵԱՀԿ դիտորդների թիւն աւելացնելու պայմանաւորութեան մասին: Նաեւ յայտնում, որ կարեւոր են համարում նման ձեւաչափով հանդիպումների շարունակութիւնը: Յայտարարում է նաեւ, որ մտքեր են փոխանակուել կարգաւորման առանցքային հարցերի շուրջ:

Այսպիսով, ի՞նչ եզրակացութիւններ են հնարաւոր այս հանդիպումից: Ամենայն հաւանականութեամբ առնուազն յառաջիկայ ամիսներին ընդհանուր առմամբ կը պահպանուի հրադարարը, ինչի մասին է վկայում թերեւս այն, որ կողմերը կարեւոր են համարել նման ձեւաչափով հանդիպումների շարունակութիւնը: Այս իմաստով, սանկտպետերբուրգեան հանդիպումը հնարաւոր է գնահատել դրական: Միեւնոյն ժամանակ, սակայն,

մենք, իհարկէ, չենք կարող իրավիճակը չափել կարճաժամկէտ կտրուածքով: Եւ այս առումով առանցքային ակնկալիքներն այն են, թէ կարգաւորման գործընթացում, ի վերջոյ, երբ են ի յայտ գալու առաւել երկարաժամկէտ կայունութեան, հրադարարի առաւել տեւական պահպանման երաշխիքներ եւ մեխանիզմներ:

Այդ տեսանկիւնից թուում է, որ ԵԱՀԿ դիտորդների թուաքանակի աւելացումը հենց այդ մեխանիզմի տարր է, հետեւաբար երկարաժամկէտ հրադարարի երաշխիք: Սակայն այս կապակցութեամբ պարզ է, թէ ինչ ժամկէտներում, ինչ պայմաններով, ինչ լիազօրութիւններով է իրականացուելու այդ ընդլայնումը: Միեւնոյն ժամանակ, ուշադրութեան է արժանի այն, որ խօսք չկայ հրադարարի վերահսկման սարքաւորումների մասին, որոնք պէտք է որ տեղադրուեն շփման գծի երկայնքով: Ընդհանրապէս բացակայում է հրադարարի խախտման համար կողմերի համար պատասխանատուութեան մեխանիզմը: Իսկ դա նշանակում է, որ այդ պատասխանատուութիւնը մնում է բանաւոր խօսքի վրայ:

Միւս կողմից՝ բացառելի չէ այն, որ Սանկտ Պետերբուրգում տեղի է ունեցել որոշակի կոմպրոմիս՝ Ռուսաստանի եւ միւս համախաղաղահարկ միջեւ: Կոմպրոմիսի էությունը կարող է լինել այն, որ Ռուսաստանը պարտաւորուում է ապահովել հրադարարի իրականացումը, իսկ դրա դիմաց Մոսկուան պարտաւորուում է թոյլ չտալ էսկալացիա: Միւս կողմից՝ հարց է առաջանում, թէ արդեօ՞ք Մոսկուան կարող է երկար ժամանակ զսպել Ատրպեյճանին: Այնչափ է, որ յամենայնդէպս միանգամ Մոսկուան արդէն անկարող է եղել այդ հարցում: Աւելին՝ դրանից յետոյ Մոսկուան անկարող է եղել անգամ փոխել իր վերաբերմունքը Ատրպեյճանի հանդէպ:

Եւ այս պարագայում, իհարկէ, ըրոմիսի էությունը կարող է լինել այն, որ Ռուսաստանը պարտաւորուում է ապահովել հրադարարն ու կայունութիւնը, այսպէս ասած, քաղաքական ազդեցութեան խողովակներով, փոխարէնը՝ միւս համախաղաղահարկ, մասնաւորապէս՝ ԱՄՆը թուլացնում է ձգտումը հրադարարի մեխանիզմների ներդրման հարցում, ինչը Ռուսաստանի համար, ըստ էութեան, լրջագոյն մտահոգութիւն է ընդհանրապէս կովկասեան ազդեցութեան թուլացման մասով:

Յամենայնդէպս այն, որ կարծես թէ նկատուում է պայմանաւորուածութիւն շարունակելու եռակողմ ֆորմատով հանդիպումները, որոշակիօրէն յուշում է նմանօրինակ կոմպրոմիսի մասին՝ համախաղաղահարկ նախաձեռնութիւնը վերադարձնում են Ռուսաստանին եւ հրաժարուում հրադարարի պահպանման առաւել հաստատուն մեխանիզմների ներդրումից, իսկ դրա դիմաց Մոսկուան պարտաւորուում է թոյլ չտալ էսկալացիա: Միւս կողմից՝ հարց է առաջանում, թէ արդեօ՞ք Մոսկուան կարող է երկար ժամանակ զսպել Ատրպեյճանին: Այնչափ է, որ յամենայնդէպս միանգամ Մոսկուան արդէն անկարող է եղել այդ հարցում: Աւելին՝ դրանից յետոյ Մոսկուան անկարող է եղել անգամ փոխել իր վերաբերմունքը Ատրպեյճանի հանդէպ:

Եւ այս պարագայում, իհարկէ,

տպաւորութիւն է, որ առկայ կոմպրոմիսը բաւականին անցանկալի է հայկական շահերի տեսանկիւնից: Առաւել եւս, երբ երեք նախագահներ յայտարարութեան մէջ նշում են, որ մտքերի փոխանակում է տեղի ունեցել կարգաւորման առանցքային հարցերի շուրջ: Ինչպէս յայտնի է, Հայաստանը յայտարարել է, որ չի սկսի բանակցութիւնը, քանի դեռ չեն ներդրուել հրադարարի պահպանման մեխանիզմները եւ չի երաշխաւորուել, որ Ատրպեյճանն այլեւս ազրեւիտ չի կիրառի Լեռնային Ղարաբաղի հանդէպ: Մեխանիզմները չկան, երաշխիքներ չկան, բանաւոր յայտարարութիւններից բացի, սակայն ահա պարզուում է, որ քննարկուում են կարգաւորման հարցեր:

Այսինքն՝ այստեղ ակնյայտ է դառնում, որ հրադարարի հարցը առնուազն կապուում է կարգաւորման հարցերի հետ: Եւ սա նշանակում է, որ ըստ էութեան եռակողմ հանդիպումների վերականգնման պայմանաւորութեան թիւնը ենթադրում է կարգաւորման եւ հրադարարի մեխանիզմների կապակցուած քննարկում: Սա իր հերթին նշանակում է, որ հայկական կողմը առնուազն կէս քայլ նահանջում է իր իսկ առաջ քաշած պայմաններից: Եւ եթէ դրան գումարենք այն, որ Պաքուն յայտարարում է ստատուս թուոյի անընդունելիութեան մասին եւ հենց դա է դիտարկում չկրակելու պայման, ապա առնուազն հարց է առաջանում, թէ ի՞նչ պայմաններ կան Երեւանի առաջ:

Տուեալ պարագայում, իհարկէ, առանցքայինն այն է, թէ ի՞նչ ուղղութեամբ եւ ի՞նչ բովանդակութեան շուրջ է ընթանալու գործընթացը, որպէսզի հասկանալի եւ պատկերացնելի լինի, թէ ուր է այն տանում եւ ինչ գին ունի Հայաստանի ու Ղարաբաղի համար:

«ԱՌԱԶԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ամէն Մարդ Իր Տնտեսութիւնն Է Զարգացնում

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Որպէս կանոն, պիւտճէի եւ ընդհանրապէս տնտեսական հարցերի շուրջ քննարկումներն Ազգային ժողովում շատ թէժ մթնոլորտում են ընթանում: Ու այնպիսի տպաւորութիւն է ստեղծուում, կարծես ե՛ւ իշխանութիւնները, ե՛ւ ընդդիմութիւնը (կամ նրանք, ովքեր կը ցանկանային հասարակութեանը ներկայանալ որպէս ընդդիմութիւն) սաստիկ մտահոգուած են տնտեսութեան զարգացմամբ, պարզապէս դրան հասնելու ճանապարհների շուրջ տարաձայնութիւններ ունեն:

Իրականում դա այդպէս չէ. տնտեսութեան զարգացումը համարեա՛ր ոչ մէկին չի հետաքրքրում: Իշխանութիւններին, օրինակ, ոչ թէ նորմալ, առողջ տնտեսութիւն ունենալն է հետաքրքրում, այլ այն, որ հնարաւորինս շատ փող մտնի պիւտճէ: Եւ ըստ դրա էլ փոխուում են օրէնքները, նոր օրէնքներ են յորինուում եւ այլն: Զուգահեռաբար, իհարկէ, նաեւ վարկեր են վերցնում՝ նպատակների վրայ շատ «չխորանալով»: Կարեւորը՝ որ փող մտնի երկիր: Իսկ յետոյ սկսուում է ամենահաճելին՝ այդ փողը ծախսելու ժամանակը: Ու տեսէք՝ իշխանութիւնները նախապատուութիւնը տալիս են ոչ թէ այն ծրագրերին, որոնց իրականացումն ամենաշատը կը նպաստի տնտեսութեան զարգացմանը, այլ այն ծրագրերին, որոնցից հնարաւոր է աւելի շատ գումար թռցնել: Ճիշտ նոյն սկզբունքով են գործում նաեւ սուպերմարկէտները: Դրանք ձգտում են աւելի շատ վաճառել ոչ թէ այն ապրանքը, որն էկոլոգիապէս աւելի մաքուր է, աւելի սննդարար եւ այլն, այլ

այն ապրանքները, որոնց վաճառքից աւելի շատ «բիւր» ունեն:

Իշխանութիւններն էլ են այդպէս անում: Օրինակ՝ երկիրը կանգնած է դեֆոլտի շեմին, պատերազմի իրական սպառնալիք կայ, բանակը ժամանակակից սպառազինութեան համար անհրաժեշտ գումար չունի, իսկ իշխանութիւնները հիւսիս-հարաւ ճանապարհի համար հարիւր միլիոնաւոր տոլարներ են ծախսում, ու վերջը չի երեւում: Կարծում էք՝ չե՞ն գիտակցում, որ այս իրավիճակում Հայաստանն իրեն այդպիսի շեղումների թոյլ տալ չի կարող, կամ չե՞ն հասկանում, որ այդ ճանապարհի (եթէ անգամ ինչ-որ հրաշքով շինարարութիւնն աւարտին հասցուի) տնտեսական էֆեկտը չնչին է լինելու: Իհարկէ հասկանում են: Պարզապէս «փող ուտեծ» տեսանկիւնից ամենայնպէս ծրագրերը դա է՝ դա են անում: Կամ, ասենք, Երեւանի փողոցների ու բակերի ասֆալտն են քարուքանդ անում ու նորից ասֆալտապատում՝ անկախ նրանից, դրա կարիքը կա՞, թէ ոչ: Կարող էին, չէ՞, այդ գումարներն այլ նպատակներով ծախսել: Բայց՝ չէ, ուրիշ ծրագրերի դէպքում կողքից «կճմտելն» աւելի դժուար կը լինէր: Իսկ այսպէս՝ խնդրեմ. մարդիկ տեսնում են, որ գործ է արւում, փողերն էլ դուրս են գրւում: Յետո՞յ ինչ, որ տնտեսական էֆեկտը գրոյցական է:

Հիմա՝ ընդդիմութեան կամ ընդդիմադիր երեւալու ցանկութիւն ունեցողների մասին: Սրանք, որպէս կանոն, ահաւոր սուր հարցեր են բարձրացնում, դաժան քննադատութեան են ենթարկուում իշխանութիւններին, անեկզոտներ են պատմում, ինչ-որ առաջարկներ են ներկայացնում եւ այլն: Բայց

ուշադրութիւն դարձրէք՝ հիմնականում ներկայացնում են ոչ թէ յնարաւոր առաջարկներ, որոնք առաւելագոյնս կը նպաստէին տնտեսութեան զարգացմանը, այլ այնպիսիները, որոնք առաւելագոյն թուով մարդկանց դուր կը գան: Օրինակ՝ առաջարկում են անմիջապէս ասֆալտապատել Գիւմրիի փողոցները (հանրապետութեան երկրորդ քաղաքն է, ու այդ առաջարկը հաստատ 150 հազար մարդու դուր կը գայ), նորոգել այս-այս-այս համայնքների մշակոյթի տները կամ դպրոցները եւ այլն: Ու դարձեալ՝ որեւէ հիմնաւորում չկայ, թէ կոնկրետ ինչպէս է դա ազդելու տնտեսութեան զարգացման վրայ, երբ է ազդելու, ինչ չափով, եւ այսպէս շարունակ: Մինչդեռ տնտեսութեան զարգացման մասին մտածողը հակառակը պիտի անէր՝ պիտի ասէր «գիտէ՞ք ինչ, երկրի վիճակը լաւ չէ, աւելի լաւ է այդ «նորոգումները» յետաձգենք ու դրա փոխարէն, ասենք, մի քանի գործարաններ կառուցենք, որ տնտեսութիւնը զարգանայ»: Բայց դա մարդկանց հազիւ թէ դուր գայ, դրա համար էլ չեն ասում: Իսկ եթէ ինչ-որ մէկն էլ ասում է՝ չորս կողմից այնպէս են յարձակուում, որ իսկոյն հասկացուում է՝ «ընդհանուր ներդաշնակութիւնը» խախտելը ոչ մէկին ձեռնառու չէ:

Կա՞ր արդեօք ելք այս իրավիճակից: Տեսականօրէն՝ այո, կայ. պայքար կողուպցիայի դէմ (իշխանութիւններն, ի դէպ, կողուպցիայի դէմ հենց տեսականօրէն էլ պայքարում են): Իսկ գործնականում պէտք է պայքարել կողուպցիայի դէմ իշխանութիւնների դէմ: Այլ հարց է, որ իշխանութիւնների ջանքերով՝ այդ ոլորտը նոյնպէս գերծ չէ կողուպցիոն ռիսկերից: «ԶՈՐՐՈՐԴ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սեֆիլեանն իր Դեմ Ցուցմունքն Ու Քրգործը Անհեթեթ Է Համարում



Ժիրայր Սեֆիլեան ձերբակալության պահում

Յունիսի 20-ին Երեւանի մէջ ձերբակալուել է Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլեանը: Ազատամարտիկին կասկածում են ապօրինի զէնք եւ ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու եւ պահելու մէջ: Ըստ Քննչական կոմիտէի՝ ձերբակալութիւնը կապուած է ամիս մը առաջ՝ Մայիսի 20-ի զէպքի հետ, երբ Ծիծեռնակաբերդի խճուղում վթարի ենթարկուած ավտոմեքենայից ոստիկանները յայտնաբերել են ԱԿԱ-74 տեսակի երկու ինքնաձիգ՝ 120 փամփուշտներով, բերման ենթարկել վարորդին եւ ուղեւորին:

Ձերբակալուածից յետոյ Ժիրայր Սեֆիլեանն առերեսուել է իր զէմ ցուցմունք տուած անձի հետ, «Ազատութեան»-ը յայտնեց Սեֆիլեանի շահերի պաշտպան Արա Զաքարեանը:

Փաստաբանը յաւելեց, որ Սեֆիլեանի զէմ ցուցմունք տուած անձը նրա գործով կալանաւորուածներէից մէկն է, եւ նա հաստատել է Քննչական կոմիտէի տարածած յայտարարութիւնը, թէ Սեֆիլեանը գիտուած խմբաւորումներով շէնքեր գրաւելու մտադրուած լինելու մասին:

Սենաչնորիի Դեմ Պայքարող Գործարարը Կարող Է Սնանկ ճանաչուել

«Կրեպսոն» ընկերութեան տնօրէնը մէկ ամիս առաջ «Ազատութեան» հետ գրոյցում պնդել էր, որ իր ընկերութիւնը կարող է գիւղատնտեսների համար ֆոսֆոր-կալիումային պարարտանիւթ մատակարարել երեք անգամ աւելի մատչելի գնով, քան այն երկու ընկերութիւնները, որոնք արդէն երեք տարի պետական սուբսիդաւորման ծրագրով եւ առանց մրցութի իրականացում են մատակարարումը, սակայն իր առաջարկը չի դիտարկուում:

Գիւղատնտեսութեան նախարարութիւնը հակադրուել էր, թէ այդ ընկերութիւնը երբեք է հիմնաւոր մրցութային առաջարկ չի ներկայացրել:

«Ազատութեան» հրապարակման հիման վրայ Տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան պետական յանձնաժողովը սկսել է ուսումնասիրել պարարտանիւթերի շրջանառութեան ոլորտը եւ գրութիւն ուղարկել «Կրեպսոն»-ի տնօրէնին՝ խնդրելով տրամադրել տեղեկութիւններ իր գործունէութեան ոլորտում առկայ խոչընդոտների, ինչպէս նաեւ իր առա-

րութիւն է ունեցել: Չնչելով անուններ՝ Քննչական կոմիտէից տեղեկացնում են նաեւ, որ այս գործի շրջանակներում ութ անձի մեղադրանք է առաջադրուել, նրանցից վեցը կալանաւորուել են, մէկի նկատմամբ յայտարարուել է հետախուզում: «Առաջադրուած մեղադրանքները հիմնաւորուել են ինչպէս գործով ձեռք բերուած բազմաթիւ ապացոյցներով, այնպէս էլ՝ իմբի անդամների խոստովանական ցուցմունքներով», - տեղեկացնում է Քննչական կոմիտէն:

«Նոր Հայաստան» ընդդիմադիր շարժման անդամ Վարուժան Աւետիսեանի պնդմամբ՝ իրենց շարժման իրեն յայտնի ունէ այլ անդամ կալանաւորուած չէ: Ըստ Աւետիսեանի, Սեֆիլեանին ձերբակալել են Ղարաբաղին յարակից տարածքների յանձնման զէմ հանդէս գալու համար:

«Սպիտակ թեթերով կարուած այդ գործի եւ Ժիրայր Սեֆիլեանին դրանով մեկուսացնելու միակ նպատակը նրա նախաձեռնած դիմադրական շարժումը կասեցնելն է», - ասաց Աւետիսեանը:

Չարկի հաւաստիութեան մասին: Գրութեան մէջ նաեւ նշուում է, որ ոչ հաւաստի կամ ոչ ամբողջական տեղեկութիւններ տրամադրելու զէպքում գործարարը կը տուական 5 միլիոն դրամի հատուկով: - «Սա ուղղակի ինձ՝ որպէս քաղաքացի, որը կոռուպցիայի եւ մենաշնորհի զէմ պայքար է տանում, ֆինանսական շանտաժ է: Լաւ տեղեկացուած լինելով «Կրեպսոն» ընկերութեան ներկայիս ֆինանսական վիճակին՝ հինգ օր յետոյ պէտք է յայտարարուի, որ ընկերութեան փաստաթղթերը ամբողջական չէին, կամ հաւաստի չէին ինչ-որ մի մասով: Եւ հինգ միլիոն տուգանելով՝ երեւի կարճ ժամանակ յետոյ դատարանի միջոցով սնանկ ճանաչել «Կրեպսոն» ընկերութիւնը»:

Գործարարի պնդմամբ՝ յանձնաժողովին իր կազմակերպութեանը պատրաստուած է տուգանել, քանի որ ինքը ցանկանում է հայց ներկայացնել Գիւղատնտեսութեան նախարարութեան զէմ՝ պաշտօնական դիրքի չարաշահումով գիւղատնտեսներին մատչելի պարարտանիւթից զրկելու համար:

Լեւոն Զուրաբեան. «Ստորագրուած Համաձայնագիրը Ընդդիմութեան Պատմական Յաղթանակն Է

Ընտրական օրէնսգրքում առանցքային մի շարք փոփոխութիւններ կատարելու վերաբերեալ ստորագրուած համաձայնագիրը, ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի կարծիքով, ընդդիմութեան պատմական յաղթանակն է, որը ձեռք բերուեց քաղհասարակութեան ու միջազգային կառուցների աջակցութեամբ:

«Ես պատրանք չունեմ: Եթէ Հայ ազգային գոնկրէսը մենակ որոշեր այս հարցը լուծելը, մենք ոչ մի արդիւնքի չէինք հասնի: Կամ որեւէ այլ քաղաքական ուժ: Բայց հանրաքուէից յետոյ բոլոր հասկացել էին, որ մեծ մասշտաբով ընտրութիւնները կեղծուում են Հայաստանում, եւ այդ դժգոհութիւնը պէտք էր ճիշդ աշխատանքներ անհրաժեշտ փոփոխութիւններ ստանալու նպատակով», - «Ազատութեան» հետ գրոյցում ասաց Զուրաբեանը:

4+4+4 պայմանական ձեւաչափում ընդգրկուած ՀԱԿ-ը, ՕԵԿ-ը, ԲՀԿ-ն, Դաշնակցութիւնն ու ՀՀԿ-ն երէկ կառավարութեան անդամների հետ ընդդիմութեան 4 պահանջները բաւարարելու նպատակով Ընտրական օրէնսգիրքը փոփոխութեան ենթարկելու համաձայնագիր ստորագրեցին: Ըստ այդմ, կուսակցութիւններին հասանելի կը լինեն բոլոր 2 հազար տեղամասերում քուէարկութեանը մասնակցած անձանց ցուցակները, քուէարկութիւնը կը թոյլատրուի միայն նոյնականացման քարտերով, որոնք պետութիւնը կը տրամադրի անվճար, տեղամասերում կը տեղադրուեն տասը մատնահետքերը ստուգող սարքեր, ընտրական ամբողջ գործընթացը բոլոր տեղամասերից կը հեռարձակուի ուղիղ եթերով: Յաղթանակ համարելով համաձայնագիրը՝ Լեւոն Զուրաբեանը



ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեան

միւսնոյն ժամանակ խորհուրդ է տալիս շատ չոգեւորուել. - «Այս համաձայնութիւնը ինքնին ընդամենը համաձայնութիւն է թղթի վրայ, եւ երաշխիք չի ստեղծուում, որ ապագայում իշխանութիւնները ձեւ չեն գտնի, ասենք, խուսափելու այս համաձայնութիւնից, վիժեցնելու կամ գտնելու ընտրակեղծարարութեան այլ ձեւեր»:

Նախնական հաշուարկներով, ընտրական գործընթացում կիրառուելիք նորամուծութիւնների ձեռքբերման համար անհրաժեշտ կը լինի 16 միլիոն եւրօ: Զուրաբեանի փոխանցմամբ, հաշուի առնելով քաղաքական ուժերի միջեւ կայացած կոնսենսուսը, միջազգային կառույցները պատրաստ են տրամադրել մօտ 11 միլիոնը:


Համաձայնագրի տակ չստորագրեցին միայն 4+4+4 ձեւաչափի մաս կազմող քաղհասարակութեան ներկայացուցիչները, յայտարարելով՝ փոփոխութիւններին դրական են վերաբերում, սակայն կարծում են, որ դրանցով հանդերձ գործող օրէնսգիրքը յետոյ թաց է նախորդի համեմատ:

«Ժառանգութիւնը Վանաձորում Եւ Գիւմրիում Կ'իշխանագրկի ՀՀԿ-ին». Զ. Փոստանցեան

«Ժառանգութիւն» ունի իր քաղաքապետի թեկնածուները եւ վանաձորում, եւ Գիւմրիում եւ այդ քաղաքներում պէտք է տեղի ունենայ իշխանափոխութիւն: Այս մասին NEWS.am-ի հետ գրոյցում ասել է պատգամաւոր Զարուհի Փոստանցեանը:

«Մենք դիտարկում ենք ուղղակի քաղաքական ընտրութիւններ եւ քաղաքական յայտ պէտք է ներկայացուի այդ ընտրութիւնների ժամանակ, ոչ միայն յայտարարել, որ պէտք է տեղի ունենայ իշխանափոխութիւն, այլ որն է այն ծրագիրը, որի շուրջ մենք պատրաստուում ենք վերցնել իշխանութիւնը: Հենց սրա մասին պէտք է խօսուի, ոչ թէ անձանց», - ասաց Զարուհի Փոստանցեանը:

«Ժառանգութիւնում» դեռեւս չեն որոշել՝ ովքեր են գլխաւորելու ցուցակները: Անդրադառնալով այն կարծիքներին, որ «Ժառանգութիւնը» թուլացել է, անմրցունակ է եւ չունի նախկին հեղինակութիւնը, ինչի հետեւանքով ոչ միայն չաղթելու, այլ քիչ թէ շատ քուէստանալու շանս չունի, Փոստանցեանն ասաց. «Ես չեմ կիսում այդ կարծիքները եւ դուք կը լինէիք ականատեսը այլ պատկերի, եթէ մեր հետ շրջէիք թէ հարաւում, թէ հիւսիսում քաղաքացիների հետ հանդիպումներ ժամանակ, որն



Պատգամաւոր Զարուհի Փոստանցեան

այս երկու օրը տեղի ունեցաւ»: Փոստանցեանը յայտարարեց, որ «Ժառանգութիւնը» չունի մրցակից. «Ժառանգութիւնը» իր յստակ ծրագիրն ունի, որը ներկայացնելու է հանրութեանը, եւ այն արժանանալու է հանրութեան համակրանքին: Գիւմրիում ոչ երէկ է թէժ եղել, ոչ էլ այսօր, մենք խնդիր ունենք իշխանագրկելու Հանրապետական կուսակցութեանը եւ վերցնելու իշխանութիւնը՝ իրականացնելու մեր քաղաքական յայտը, որը տարբերուելու է մեր այս 25 տարիների քաղաքական յայտից»:

Հարցին՝ ինչ ուեսուրով են վերցնելու իշխանութիւնը, նա պատասխանեց. «Ցանկացած քաղաքական ուժի համար այդ ուեսուրը մեր հանրութիւնն է»:

ԼՈՒՐԵՐ

28 Պատգամաւորներ Միացել են «Թոյլ Չէնք Տալու Արամ Աթէշեանին Հայաստան Մտնել» Նախաձեռնութեանը

Հայաստանի Աժ 28 պատգամաւոր միացել է «Թոյլ չենք տալու Արամ Աթէշեանին Հայաստան մտնել» նախաձեռնութեանը: Այս մասին Յունիսի 20-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է փորձագետ-վերլուծաբան Սարգիս Հացպանեանը:

Հացպանեանի խօսքով, հոգեւոր խորհրդի նիստը, որին մասնակցելու համար Հայաստան պիտի ժամանի Աթէշեանը, հաւանաբար, տեղի կ'ունենայ Հոռոմի Ֆրանցիսկոս պապի մեկնումից յետոյ:

Աւելի վաղ NEWS.am-ը յայտնել էր, որ «Ֆէյսբուք» սոցիալական ցանցում Յունիսի 16-ին ստեղծուել է «Թոյլ չենք տալու Արամ Աթէշեանին Հայաստան մտնել» անունով մամուլի խումբ:

Կազմակերպիչները, մասնաւորապէս, նշել են.

«Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու կողմից սրբադասուած մեր 1,5 միլիոն անմեղ զոհերի յիշատակը օրեր առաջ հրապարակաւ պղծած, Կ. Պոլսի հայոց պատրիարքի աթոռը բռնազաւթած Արամ Աթէշեանը Հոռոմի Պապի՝ Հայաստան այցելութեան առիթն օգտագործելով ցանկանում է իր անցանկալի ներկայութեամբ մեր երկիրն էլ պղծել:

Երբ Բունդեաթագի թուրք պատգամաւորները յորդորում են արգելել էրզրոյանի մուտքը Գերմանիա, մենք եւս՝ որպէս սրբերի շարքին դասուած իր միլիոնաւոր զոհերի յիշատակը յարգող հայ ազգի արժանապատիւ գաւազներ, թոյլ չենք տալու նրա Հայաստան մուտքը:

2016 թ. յունիսի 22-ին հանդիպում ենք Զուարթնոց օդանաւակայանում, Ռ. Թ. էրզրոյանի դրածոյ Աթէշեան կոչեցեալ Աթէշօղլուին մեր երկիր մուտքը թոյլ չտալու համար»:

Աթէշեանը դրանից յետոյ կայացելի նաեւ Հայաստան՝ մասնակցելու Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նիստերին ինչպէս նաեւ Ֆրանցիսկոս Սրբազան Պապի՝ Հայաստան այցելութեան առթիւ կազմակերպուած միջոցառումներին:

Յիշեցնենք, որ Արամ Աթէշեանը նամակ էր գրել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիփ էրզոգանին՝ քննադատելով Գերմանիայի խորհրդարանի՝ Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւը, ինչն առաջ էր բերել աշխարհում համայն հայութեան դժգոհութիւնը:

Բագրատ Էստուկեան. «Թուրք Հասարակութիւնը Հետզհետէ Գիտակցում է, Թէ 1915-ին Ինչ է Եղել»

Գերմանիոյ խորհրդարանի բանաձեւը, Թուրքիայում լոյս տեսնող «Ակօս» երկրագնդու պարբերականի հայերէն էջերի խմբագիր Բագրատ Էստուկեանի կարծիքով, հարցեր է առաջացրել հասարակութեան շրջանում. - «Հասարակութիւնը հետզհետէ կը գիտակցի, որ 1915-ին ինչ եղած է, ինչի մասին է խօսքը»:



«Ակօսի» հայերէն էջերու խմբագիր Բագրատ Էստուկեան

Բացի այդ, ըստ էստուկեանի, Բունդեաթագի բանաձեւը կարեւոր էր այն առումով, որ Գերմանիան ընդունեց մեղակցութեան իր բաժինը: «Չմոռանանք, որ իր երկրում ապրող թուրք բնակչութիւնը չորս միլիոնից աւելի է, եւ այս երկու երկրները իրար հետ խիստ կապուած են», - նշեց նա:

Հայ-թուրքական հաշտեցման ցյուրիխեան արձանագրութիւնների ձախողումից յետոյ, էստուկեանի խօսքով, Թուրքիայում Ատրպէյճանի ներդրումներն ու ազդեցութիւնն աւելի են աճել, եւ հիմա պաշտօնական Անգարան առաւել քան երբեք է հայ-թուրքական շարաբերութիւնների հարցը համաձայնեցնում է Պաքուի հետ:

«Իսկ Հայաստանը արդէն 25 տարի է, որ առանց Թուրքիայի սահմանի, Ատրպէյճանի կողմից շրջափակման ենթարկուելով, ծով չունենալով, գոյատեւելու փորձը սուրբ: Իրենք կարծում էին, թէ այդ շրջափակումով Հայաստանը ծունկի պիտի գայ, բայց 25 տարի է անցել, ծունկի չի իջել... Թող թուրքերը խորհեն, թէ ինչքան կարող են սահմանը փակ պահել, Եւրոպայի մէջ ուրիշ փակ սահման չկայ», - ասաց նա:

Անդրադառնալով հայկական համայնքի խնդիրներին՝ էստուկեանն ասաց, որ Ստամբուլից եւս շատերը տեղափոխուած են Արեւմուտք: Այնուամենայնիւ, նրա

Հակակոռուպցիոն Օրինագծերի Փաթեթն Աշնանը Կը Ներկայացուի Ազգային Ժողով

«Ապօրինի հարստացումը քրէականացնելը մի շարք զարգացած երկրներում կոռուպցիայի դէմ պայքարում յաջողութեան հասնելու երաշխիքներից մէկն է»: Այս մասին Հայաստանի վարչապետի գլխաւորած՝ Կոռուպցիայի դէմ պայքարի խորհրդի հերթական նիստում յայտարարել է «Իրաւաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարէն Զաղոյեանը՝ յղում անելով միջազգային փորձին ու սեփական ուսումնասիրութիւնների արդիւնքներին:

Զաղոյեանը 7 տարի շարունակ այս մասին բարձրաձայնել է, բայց, ըստ նրա, իր մտահոգութիւններին միայն հիմա են արձագանգում: Նիստի ժամանակ վարչապետ Յովիկ Աբրահամեանը յանձնարարական է տուել երկամսեայ ժամկէտում օրէնսդրական փաթեթ մշակել՝ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու համար: «Ակնկալում էք, որ ձեր առաջարկները տեղ կը գտնեն փաթեթում», - «Ազատութեան» այս հարցին ի պատասխան, Զաղոյեանը նշեց՝ «Կարծում եմ, որ ապրիլեան քառօրեայ պատերազմը ցոյց տուեց Հայաստանում կոռուպցիայի վտանգաւոր հետեւանքները, ու նաեւ իշխանութիւնները զգացին դրա լրջութիւնը: Դա ժամանակի հրամայականն է հասարակութեան պահանջն է, կապրենք, կը տեսնենք»:

Կոռուպցիայի դէմ պայքարի խորհրդի նիստին գեկուցումով է հանդէս եկել նաեւ Բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիկայի յանձնաժողովի նախագահ Սիրանուշ Սահակեանը: Նա ներկայացրել է բարձրաստիճան պաշտօնատար անձանց գոյքի եւ եկա-

մուտների յայտարարագրման ինստիտուտում առկա բացթողումները: «Ազատութեան» հետ զրոյցում նոյն յանձնաժողովի անդամ Արմէն Խոզազեանը թուարկեց այդ բացթողումներից մի քանիսը: Մասնաւորապէս, ըստ նրա, պէտք է վերանայուի յայտարարագիր ներկայացնողների եւ փոխկապակցուած անձանց շրջանակը, ինչպէս նաեւ յայտարարագրի բովանդակութիւնը:

«Այսինքն, էսօր յայտարարագիր է ներկայացնում ամուսինը, համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող գաւակը, չափահաս չամուսնացած գաւակը: Առաջարկուելու է այլ մոդել, որովհետեւ սակայն արդէն նշանակում համատեղ ապրող, ինչպէ՞ս որոշենք համատեղ ապրելը... Ի՞նչ է նշանակում չափահաս, չամուսնացած: Արդեօ՞ք չամուսնացած լինելը հանգամանք է, որ ինքը յայտարարագիր ներկայացնի: Իսկ ամուսնացածը: Պետք է ճիշդ շրջանակ ընտրուի, որը պէտք է շրջափակի ցիկլը՝ ապօրինի հարստացումը բացառելու համար», - ասաց Խոզազեանը:

Մօտ 10 օր առաջ կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանն էլ Ազգային ժողովում հարցուպատասխանի ժամանակ նշել էր, որ յայտարարագրման ինստիտուտը պէտք է փոխուի, այն պէտք է համալրուի նոր գործիքակազմով, ինչը «յանցագործութիւնները բացառելու հնարաւորութիւն կտայ»: Ամենայն հաւանակաւորութեամբ արդէն աշխարհային նստաշրջանին խորհրդարանին կը ներկայացուի կառավարութեան մշակած օրինագիծը:

Թալիշցիները «Թալիշ» Գումարտակ Են Ստեղծում՝ Գիւղը Պաշտպանելու Համար

Թալիշցիները «Թալիշ» գումարտակ են կազմում՝ գիւղի սահմանային գօտին պաշտպանելու համար: Այս մասին Յունիսի 18-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց «Թալիշ» հիմնադրամի հիմնադիր տնօրէն, Թալիշ գիւղի մարտական ջոկատի հրամանատար Միքայէլ Ապրեսեանը:

Նա նշեց, որ գումարտակ կազմելու վերաբերեալ պատասխանատու մարմինների հետ համաձայնութիւն է ձեռք բերուել:

«Կոչ եմ անում բոլոր թալիշցիներին համախմբուել, միանալ

«Թալիշ» գումարտակին, զբաղուել մեր գիւղի պաշտպանութեամբ: Մենք չենք կարող նստել Երեւանում եւ չպաշտպանել մեր գիւղը թուրքից: Մենք հենակէտ ենք թողել թշնամու մօտ, եթէ գինադադար չլինէր, վստահեմ եմ՝ կը վերցնէինք հետ, բայց քանի դեռ այդ դիրքը թշնամու ձեռքին է՝ վտանգաւոր է գիւղ վերադառնալը: Կոչ եմ անում չհաւատալ այն ասեկոսներին, թէ թուրքը վերցրել է Թալիշը, դրանք սուտ խօսակցութիւններ են», - ասաց նա:

Սարգսեան Եւ Ալիւ Զամաւայնաժ Են

Շարունակուած էջ 1-էն

Քայլ կատարեցինք, թէկուզ փոքրիկ քայլ, ոչ թէ դէպի պատերազմի վերսկսում, այլ դէպի խաղաղութիւն, թէկուզ միգրացի ժամանակաւոր»:

Հայ ազգային կոնգրեսի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի խօսքով՝ գնահատականներ տալու համար շատ քիչ բան յայտնի է: «Շատ դժուար է գնահատականներ տալ մի քանի նախադասութիւններու հիման վրայ, որոնք աւելի շատ կոչուած են քողարկելու դիւանապաշտական այդ գործընթացի մասնաւորները, քան բացառապէս

լու», ըստ Զուրաբեանի:

«Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Զարուհի Փոստանջեան դրական չգնահատեց ապրիլեան քառօրեայ պատերազմին յետոյ տեղի ունեցած հանդիպումները, քանի որ որեւէ ձեռով չէ փոխուած իրադրութիւնը. Ատրպէյճան պատասխանատուութեան չէ կանչուած իր սանձազերծած նախադրձակման համար: «Պէտք է չեղեալ համարուէր բանակցային սեղանին գտնուող բոլոր փաստաթղթերն ու բանակցութիւնները սկսելը զրոյց՝ Լեւոնային Ղարաբաղի մասնակցութեամբ», կարծիք յայտնեց Տիկ. Փոստանջեան:

ԷՐՏՈՂԱՆ ԾԱՆՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ԿԸ ԶՆՉԵՑՆԷ ԶԱՅԵՐՈՒՆ ԴԵՍ



Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանը Անգարայի մէջ, թրքական անվտանգութեան ուժերուն ներկայացուցիչներու հետ հանդիպման ընթացքին նշած է, որ իրենք վճռական պայքարի մէջ են «պետութեան ներսը գուգահեռ պետութիւն ստեղծել ջանացող կառուցիչի դէմ»: Այս մասին կը տեղեկացնէ թրքական «Sabah» թերթը, նշելով, որ այդ շարքին էրտողան մեղադրած է նաեւ հայերը՝ նշեալ կասկածելի կառուցիչի («Կիւլէնեան շարժում» -իմբ.) հետ համագործակցելու եւ Թուրքիոյ դէմ դաւադրութիւններ նիւթելու մէջ:

«Այդ դաւաճան վոնձակը աշխարհի բոլոր անկիւններուն մէջ Թուրքիոյ դէմ աշխատանք կը տանի: Ուր ալ երթանք՝ կը տեսնենք, որ գուգահեռ կառուցիչ անջատողական անաբեկչական խմբաւորման

ներկայացուցիչները՝ հայ հրոսակախմբերու հետ ուս-ուսի տուած կը գործեն ընդդէմ մեր պետութեան: Ես անձամբ ատոր ականատեսը եղայ ԱՄՆ-ի մէջ, ուր համաժողովի պիտի մասնակցէի. այդ կառուցիչը «Քիւրտիստանի բանուորական կուսակցութեան» (PKK), հայկական «անաբեկչական» խմբաւորման հետ իմ անձի եւ իմ պատուիրակութեան դէմ ցոյցեր կազմակերպեց», - ըսած է էրտողանը:

Թուրքիոյ նախագահը խոստացած է, որ այս «հակաթրքական» ուժերու դէմ պայքարը միայն Թուրքիոյ ոստիկանութեան ու անվտանգութեան ուժերու ուսին պիտի չմնայ, յայտնելով այն համոզումը, որ թրքական պետութիւնը, ի վերջոյ, պիտի յաղթէ իր դէմ գործող ուժերուն:

ԹՈՒՐՔԻԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՑԱԾ Է ԵՐՈՒՆՈՐՅՈՒՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՅՑԸ

Եւրոխորհրդարանի Թուրքիոյ մշտական ներկայացուցչութիւնը ետ ուղարկած է Թուրքիոյ մասին ԵՆ-ի տարեկան զեկոյցը, որովհետեւ այնտեղ Անգարային կոչ եղած է ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը: Այս մասին կը տեղեկացնէ թրքական «Milliyet» թերթը, նշելով, որ ապրիլ ամսուն ԵՆ-ի մէջ 375 կողմ ձայնով ընդունուած «Թուրքիոյ առաջընթացի գնահատման զեկոյցը» Թուրքիոյ մշտական ներկայացուցչութեան ուղարկուած է 17 Յունիսին:

սին: Նոյն օրը՝ առանց զեկոյցի հետ կապուած որեւէ գործընթաց իրականացնելու, ներկայացուցչութիւնը անմիջապէս ետ ուղարկած է զայն:

Դիւանագիտական աղբիւրներու համաձայն, զեկոյցը վերադարձնելու պատճառը այն է, որ ան կը պարունակէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման կոչ:

Նշենք, որ նախորդ տարի նոյնպէս Թուրքիան վերադարձուցած էր ԵՆ-ի տարեկան զեկոյցը՝ նոյն պատճառաբանութեամբ:

«ԱԿՕՍ»Ի ԴԵՍ ՍՊԱՈՒՆԱԼԻՔԻՆ ԳԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՍԿՍԻ

Յունիս 10-ին դատարան ներկայացան այն անձերը, որոնք Ապրիլ 24, 2015-ին «Ակօս»ի խմբագրատան առջեւ «Գիշեր մը յանկարծ կրնանք գալ» նախադասութեամբ սեւ ծաղկեպսակ մը դրած էին՝ սպառնալով ներկայ խմբագրապետ Եղուարդ Տանձիկեանին: Այս շարժումին հեղինակները՝ Ազգայնապաշտ Թուրքիա կուսակցութեան Պոլսոյ մասնաճիւղի նախագահ Պիլալ Կէօքչէ-իւրթ եւ ազգայնամոլ էրճան Ուշար, դատարանին մէջ մերժեցին իրենց վերագրուած յանցանքը: Կէօքչէիւրթ ըսաւ. «Սեւ ծաղկեպսակով ըսել ուզեցինք, որ կը բողոքենք պետութեան կողմէ մերժուած Յեղասպանութեան մասին իրենց կողմնակալ հրատարակութիւններուն դէմ: Եթէ սեւ ծաղկեպսակը

սպառնալիք մըն է, սպա սպառնալիք է նաեւ

«Հրանդ Տինքի հաշիւը պիտի պահանջուի» գրութեամբ այն սեւ ծաղկեպսակը, որ դրուած էր արդարադատութեան նախարարութեան առջեւ»:

Դատավարութեան ընթացքին խօսք առաւ նաեւ «Ակօս»ի փաստաբան Ֆեթհիյէ Չեթին, որ յայտնեց, թէ երբ Տինք իբրեւ թիրախ ցոյց տրուեցաւ օրին, նոյն բանը գրուեցաւ. «Գիշեր մը յանկարծ կրնամ գալ, Հրանդ Տինք»: Այդպէս ալ եղաւ:

Տանձիկեան ներկայ չէր դատավարութեան այս նիստին, ուստի դատաւորը որոշեց, որ ան բռնի ուժով դատարան բերուի յաջորդ նիստին:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՌՈՒՄԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՅԸ ՍՈՒՐԻԱ

Քանի մը օրեր առաջ Ռուսիոյ Պաշտպանութեան նախարար Սերգէյ Շոյքուն Սուրիա այցելեց, նպատակ ունենալով քննական շրջապտոյտ մը կատարել ուսական օգուժի խարխալը, միաժամանակ շեշտելով իր երկրի ազդեցութիւնը այդ տարածաշրջանին մէջ:

Այս առթիւ Սերգէյ Շոյքունը հանդիպում մը ունեցաւ նաեւ Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշար Ասատի հետ: Արդարեւ, Դամասկոսի մէջ տեղի ունեցած երկկողմանի խօսակցութեանց ընթացքին արծարծուած են անաբեկչութեան դէմ համատեղ պայքարի շրուջ համագործակցութեան հարցերը:

Նշենք նաեւ որ այս այցելութիւնը կը զուգարիպի Փութինի օր մը առաջ կատարած այն յայտարարութենէն ետք, որով կ'առաջարկուէր սուրիական դահլիճէն ներս ներգրաւել կարգ մը ընդդիմադիր տարրեր, գետին պատրաստելու համար լճացումի մէջ գտնուող խաղաղութեան գործընթացին:

ԻՐԱՔԵԱՆ ՈՅԺԵՐԸ ՎԵՐԱԳՐԱԿԵՑԻՆ ՖԱԼԼՈՒԺԱՆ

Պաղտատէն ստացուած տեղեկութեանց համաձայն իրաքեան զօրքերը վերագրուած են Ֆալլուժայի գլխաւոր հիւանդանոցը: Անոնք կրցած են ականագրեծել շատ մը շրջաններ եւ վերատիրապետել Անպար գաւառի մեծ մասին, որ կը գտնուի մայրաքաղաք Պաղտատէն ոչ շատ հեռու: Աւելցնենք նաեւ որ Տահէշի ազդեցութեան տակ գտնուող այս շրջանի ընդդիմադիրներու եւ դիպուկահարներու դէմ շարունակական յարձակումներ կը գործեն իրաքեան եւ ԱՄՆի օգուժի ուժերու սաւառնակները:

6 ԱՐԲԱՍԱՆԵԱԼՆԵՐ ՄԱՅՈՒՍԻԺ ԱՍԱՑԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

«Ասօշիէյթըտ Փրէյս» գործակալութեան համաձայն Եգիպտոսի դատարանը վեց ամբաստանեալներու դէմ մահապատիժ արձակեց: Անոնց մէջ կը գտնուին «Ալ ժազիրա»ի պատկանող զոյգ լրագրողներ, որոնք վերաքննիչ ատեանի մօտ դիմում ներկայացուցած են:

Ամբաստանեալները կը մեղադրուին ազգային անվտանգութեան վերաբերեալ փաստաթուղթեր փոխանցած ըլլալով Քաթարին եւ Տոհայի հեռուստակայանին, իսլամիստ նախագահ Մուհամմատ Մորսիի օրով:

Վերոյիշեալ հարցի կապակցութեամբ գլխաւոր մեղադրեալները Մորսին եւ իր երկու օգնականները 25 տարուան բանտարկութեան ենթարկուած են:

Մորսին եւ իր քարտուղարը Ամին Սիրաֆին, իւրաքանչիւրը 15 տարուան յաւելեալ ազատազկրման դատապարտուեցան պաշտօնական վաւերացուած թղթեր բաց թողած ըլլալուն համար: Նոյնանման պատիժի ենթարկուած է նաեւ Սիրաֆիի դուստրը՝ Քարիման:

Եգիպտոսի մէջ կայացած առաջին ազատ ընտրութիւններուն հանրապետութեան նախագահ հռչակուած Մորսին պաշտօնանկ եղաւ 2013ի Յուլիսին: Ան այլ հարցով մահապատիժ ստացած էր եւ երկու անգամ մահուան եւ 20 տարի բանտարկութեան դատապարտուած էր: Սակայն բոլորին համար վերաքննութիւն պահանջած է:

Մորսիի պաշտօնանկութենէն ետք «Իսլամ Եղբայներ» կազմակերպութիւնը արգիլուեցաւ եւ նկատուեցաւ անաբեկչական կազմակերպութիւն:

Ներկայիս բոլոր ամբաստանեալները (թիւով 11 հոգի, ներառեալ Մորսին) կալանքի տակ կը մնան եւ ենթակալ վերաքննութեան:

Միջազգային ներուժի կազմակերպութիւնը կոչ ուղղած է իսկոյն կասեցնելու մահապատիժներու գործադրութիւնը եւ ազատ արձակել լրագրողները:

«Ալ ժազիրա» դատապարտած է արձակուած վճիռները, զանոնք նկատելով անհիմն վերագրումներ եւ անհեթեթ արշաւ մը, ուղղուած ազատ խօսքի արտայայտութեան դէմ: Ան միաժամանակ կոչ ուղղած է համաշխարհային հանրային կարիծիքին զօրակցելու լրագրողներուն:

ԱՐԱԲԵԿՉԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ ՅՈՐԴԱՆԱՆ-ՍՈՒՐԻԱ ՍԱՅՄԱՆԱՅԻՆ ԶԱՏՈՒԱԾԻՆ ՄՕՏ

Յորդանանի մէջ այս առաւօտ անաբեկչական պայթում մը գրանցուած է: Պայթումը եղած է Յորդանան-Սուրիա Բաքլան անցման կէտին մօտ: Ականուած ինքնաշարժով եղած պայթումին հետեւանքով զոհուած են յորդանանեան բանակի վեց զինուորներ: Մինչեւ այս պահը պայթումին պատասխանատուութիւնը չէ ստանձնուած որեւէ կողմէ:

Երկրի ապահովական մարմիններ խստօրէն դատապարտած են դէպքը ու նաեւ յայտնած, որ ապահովական մարմիններ կարելոր ճիգեր պիտի կատարեն պայքարելու համար անաբեկչներուն դէմ: Նշենք, որ Բաքլան շրջանը կը գտնուի Իրաք-Սուրիա-Յորդանան սահմանային հատուածին մօտ: Յիշեցնենք, որ այս առաջին անգամը չէ, որ Յորդանան թատերաբեմը կը դառնայ նման անաբեկչական յարձակումներու:



ՎԵՐՋԻՆ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ - Բ «ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓԻՆ» ՈՒՐՈՒՎԿԱՆ ՈՒ ԲԱՐԴՈՅԹԸ...

ԷՏՈՒԱՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Դեռ բոլորիս մէջ թարմ է այն լիշողութիւնը, երբ տարիներ առաջ, քաղաքամայր Երեւանի Ֆրանսական հրապարակին վրայ հազարաւոր հայորդիներ, Ֆրանսայի նախագահ՝ Նիքոլա Սարքոզիի եւ ՀՀ նախագահ՝ Սերժ Սարգսեանի ներկայութեամբ կը բացազանչէին «Կեցցէ Ֆրանսան», «Կեցցէ Հայաստանը»:

Յիշեալ օրէն չորս տարի ետք, Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ընդունեց նաեւ թրքական դիւանագիտութեան վերջին միջնաբերդ Գերմանիան, ուրեմն նաեւ միջազգայնօրէն դատապարտեց Հայոց Յեղասպանութիւնը:

Այս անգամ, սակայն, Գերմանիոյ Քանցլէր՝ Անկէլա Մերքէլ Հայաստան չժամանեց, չեղան քաղաքական բարձրագոյն յայտարարութիւններ, ինչպէս նաեւ փոխադարձ եղբայրութիւնը հաւաստող աւելորդ երդումներ: Ամէն ինչ տեղի ունեցաւ տեսակ մը գաղտնիութեան շղարշի ներքոյ եւ միայն այս կապակցութեամբ հնչած Թուրքիոյ ջղաձիգ յայտարարութիւնները եկան փաստելու, թէ անոնց համար որքան դիպուկ ու ցաւազին էր գերմանացիներուն տուած հարուածը:

Յաւալի է, որ այսպիսի երկու կարեւորագոյն պարագաներու հայոց քաղաքական միտքը ծայրայեղութիւններու մէջ ինկաւ: Առաջինի պարագային՝ համատարած խանդավառութիւն, իսկ երկրորդի պարագային՝ քար լուծիւն:

Առաջինի պարագային մոռցուեցաւ եւ չհչին անդրադարձ իսկ չեղաւ Կիլիկիան Հայաստանը դաւադրաբար ծախելու մասին, իսկ երկրորդի պարագային՝ Հայաստանը այդպէս ալ որեւէ յօդաբաշխ պահանջ կամ առաջարկութիւն չհնչեցուց՝ Գերմանիոյ իրաւասութեան տակ գտնուող արխիւներու գաղտնագրածման եւ իրենց դրամատուններուն մէջ գտնուող ու սառեցուած հայկական նիւթական հսկայ արժէքներու գոյութիւնը հաստատելու մասին:

Մինչ այդ տեղի ունեցած էր նաեւ տարածաշրջանային ուրիշ կարեւոր իրադարձութիւն մը, որ, մէկ ակնարկով կարծես, բնաւ կապ չունի ինդրոյ առարկայ դէպքերուն հետ, սակայն, նկատի առնելով այն հանգամանքը, որ քաղաքականութեան մէջ պատահակապէս թիւններն ու գուգադիպութիւն-

ները կը բացառուին՝ յիշենք նաեւ ռուս-թուրքական հերթական եւ այս անգամ ո՛չ անհիմն սրացումներուն մասին:

Գերմանիոյ Պունտեսթակի կողմէ Հայոց Յեղասպանութեան բանաձեւը ընդունելէ ընդամէնը օրեր առաջ, պաշտօնական Անգարան ռուսերը մեղադրեց Քրտական Աշխատաւորական կուսակցութեան մեծ քանակութեամբ գէնք մատակարարելու մասին, անհեթեթ էն եւ մտացածին: Անշուշտ, Թուրքիոյ բոլոր յայտարարութիւնները մտացածին են: Ատոնք անհեթեթ էն եւ ոչ մէկ կապ ունին իրականութեան հետ: Ի տարբերութիւն Թուրքիոյ՝ Ռուսաստանը չգբաղիր գէնք-գինամթերքի ապօրինի մատակարարումներով: Այս բոլորէն վերջ, ՌԴ արտաքին գերատեսչութեան մամլոյ խօսնակ Մարիա Զախարովա, կարծես ի միջի այլոց կը յաւելէ, թէ՛ «որոշ գինատեսակներ ռուսական կողմը կը տրամադրէ Իրաքի տարածքի քիւրտերուն, սակայն... այդ կ'ընէ պաշտօնական Պաղատի կեդրոնական իշխանութեան հետ համաձայնեցուած»:

Կրնա՞ր արդեօք խօսնակը չիշատակել վերջին պարբերութիւնը, առաւել եւս այն ատեն, երբ խօսքը միայն Թուրքիոյ տարածքի քիւրտերը գինելու մասին էր: Անշուշտ կրնար, եթէ յստակ միտում չըլլար...

Վերադառնանք, սակայն, փաստերուն, որոնք ինչպէս գիտենք, կը բացառեն բոլոր «եթէ»-ներուն գոյութիւնը:

Ինչպէս կը տեղեկացնէ թուրքական «Սապահ» թերթը, խորհրդարանական Արդարութիւն եւ Զարգացում, Ժողովրդա-Հանրապետական եւ Ազգայնական Շարժում խմբակցութիւնները համատեղ յայտարարութիւն կը նախապատրաստեն: Թուրքիոյ Խորհրդարանի խմբակցութիւնները

Գերմանիոյ Պունտեսթակի կողմէ Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւի ընդունման միասնական արձագանգ պիտի տան:

Կը նշուի նաեւ, որ քրտամէտ Ազգերու Ժողովրդավարութիւն կուսակցութիւնը կտրականապէս մեր-

ժած է համատեղ այդ յայտարարութիւնը ստորագրելու առաջարկը: Քրտամէտ կուսակցութեան տարբեր ներկայացուցիչներ բազմիցս խօսած էին Հայոց Յեղասպանութեան մասին եւ իրենց պապերու մասնակցութեան համար ներողութիւն խնդրած:

Անշուշտ, յարգելի ընթերցող, ո՛չ ոք այնքան միամիտ ու դիւրահաւատ է, որ պէտք իրապէս պատկերացնէ, թէ Գերմանիան խորապէս ըմբռնած է պատմութեան առջեւ իր պատասխանատուութեան լրջութիւնը եւ անկեղծօրէն կը գղջայ իր յանցաւոր մասնակցութեան համար...

Ո՛չ ոք այսօր քաղաքականապէս այնքան տհաս է, որ մտածէ, թէ քիւրտերուն մեծ քանակութեամբ գէնք տրամադրելով՝ ռուսերը միայն ու միայն տողորուած են իրենց «դարաւոր եղբայր» հայերուն սատարելու անշահախնդիր տեսլականով...

Եւ, առաւել եւս, ո՛չ ոք այնքան... (թոյլ տուէք չօգտագործել համապատասխան բառը) ... է, որ հաւատայ, թէ օր մը թուրքն ալ իրապէս կը գղջայ...

Այս ամբողջը, սակայն, լուրջ եւ համապարփակ վերլուծութեան ու քաղաքական գնահատականի կը կարօտին. ո՛չ թէ լրագրական ու գիտական, այլ առնուազն ՀՀ արտաքին գերատեսչութեան պաշտօնական դիրքորոշման եւ գնահատականին:

Հայ ժողովուրդը բնաւ ու բնաւ խիզախ ու հայրենասուէր հոնտորներու, գինուորական փայլուն գործիչներու պակաս չէ ունեցած, բայց ո՛ր մնացած է քաղաքական հատու միտքն ու հետեւողական դիւանագիտութիւնը:

Մեզ մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ ուղեկցել «թուղթէ շերեփին» բարդոյթն ու ուրուականը: Արհեստականօրէն ու պարտադրաբար տրոհուած հայ ժողովուրդը դարձեալ երկու մասի բաժնուած, մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ անիմաստ կերպով բանավէճի բռնուիլ չեղած հարցի մը շուրջ, թէ՛ կ'արժէ՞ արդեօք ցնծալ Թուրքիոյ քաղաքական վերջին միջնաբերդի փլուզումով, թէ՛ պէտք չէ հաւատալ անոնց «կոկորդիլոսի արցունքներին»:

Այս հարցին շուրջ բանավէճը անիմաստ համարեցինք, որովհետեւ երկու կողմերու փաստարկներն ալ հեռու չեն ճշմարտութենէն, եւ երկու կողմերուն հարցա-

կանները միայն ու միայն մէկ պատասխան կ'ակնկալեն, որուն հասցէատէրը Հայոց պետականութեան ու դիւանագիտութեան բարձրագոյն ատենն է:

Ու, եթէ «թուղթէ շերեփը հասկանալի եւ ըմբռնելի էր մեր մեծագոյն հայորդիներէն մէկուն՝ երջանակալիչատակ Խրիմեան Հայրիկի պարագային, ապա հայկական Ազատ եւ Անկախ զոյգ Հանրապետութիւններու պարագային՝ աններելի, եթէ ոչ դատապարտելի «շուայութիւն» է:

Ֆրանսացի մտաւորականները մեզմէ շատ աւելի լաւ գիտեն, թէ ինչպէս քանի մը միլիոն ոսկիով ծախուեցան Ալեքսանտրէթի «Սանճաքը» ու ամբողջ Կիլիկիան: Այդ մասին ոչ թէ մենք, այլ ֆրանսացի պատմաբաններն ու վիպագիրները կը գրեն...

Գերմանացին ալ գիտէ, թէ ինչ նողկալի դերակատարում ունեցան իրենք Ա. Աշխարհամարտի՝ հայոց համար ճակատագրական ու ողբերգական տարիներուն: Այդ մասին գրած են գերմանացի լուսաւոր քաղաքագէտներ ու իմաստասէրներ Քարլ Լիպքնեխթ եւ Եոհաննէս Լեփսուս...

Իսկ մենք կը շարունակենք միայն գիրենք ու իրենց պէս հազարաւորները վկայակոչելով:

Յարգելի ընթերցող, ինչպէս գնահատեցիր՝ խօսքը այստեղ պետական կողմնորոշման բացակայութեան մասին է, ոչ թէ մեր աշխարհասփիւռ բազմաթիւ կազմակերպութիւններու մասին, որոնք իրենց առօրեայ անձնուէր ու տքնաշան աշխատանքով կը ջանան մշտապէս վառ պահել մեր արդար պահանջատիրութեան ջահը:

... Քաղաքագէտ Հրանդ Մելիք-Շահնազարեան կը գրէ.

«Գերմանիոյ Պունտեսթակի կողմէ ընդունուած Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ բանաձեւը մեծ նուաճում է եւ Թուրքիան զսպելու կարեւոր գործօն:

«Ես կը կարծեմ, որ հայկական կողմը բաւական շահեկան ձեւով կրնայ օգտագործել այս հանգամանքը՝ Թուրքիոյ աքթիւութիւնը ոչ միայն տարածաշրջանի մէջ, այլ ընդհանրապէս, ճնշելու եւ վերահսկողութեան տակ պահելու համար:

«Գերմանիոյ կողմէ այսպիսի բանաձեւի ընդունումը Թուրքիոյ համար լուրջ խնդիրներ կը ստեղ-

Շարք էջ 19

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեցող է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Պէյրուքի Մէջ Տեղի Ունեցաւ Քսան Կախադաններու 101-Ամեակի Ոգեկոչումը

101 տարի եւ հայուն պայքարը կը շարունակուի: 101 տարի եւ Հնչակեան Քսան անմահներու շունչն ու պատգամը տակաւին վառ կը մնան իւրաքանչիւր ազատասէնչ հնչակեանի եւ հայու սրտին մէջ: 101 տարի եւ Փարամազին ու անոր ընկերներուն չեղափոխական սկզբունքները եւ ուղեգիծը կը մնան այժմէական: 101 տարի եւ հայուն օրհասական ճակատամարտը կը մղուի՝ յանուն ազատ, անկախ ամբողջական Հայաստանի, ընկերա-յին արդարութեան, ընկերվարութեան, ամուր պետականութեան եւ հաւասարութեան:

Կազմակերպութեամբ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ Մարմին, ՀԿԲՄ-ի Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գործէի շրջափակին մէջ երէկ տեղի ունեցաւ Հնչակեան Քսան անմահներու նահատակութեան 101-րդ ամեակի ոգեկոչման հանդիսութիւնը, ներկայութեամբ Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի, ՄԱՀԱՄ-ի Կեդրոնական մարմինի ատենապետ վեր. Դոկտ. Փօլ Հայտոյթեանի, Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան դիւանապետ եւ Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցւոյ ժողովրդապետ Սեպուհ Վրդ. Կարապետեանի, Պէյրուքի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Սամուէլ Մկրտիչեանի եւ գլխաւոր հիւպատոս Աշոտ Վարդանեանի, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեանի եւ անդամներուն, պետական երեսփոխաններ Մեթր Սերժ Թուր-



սարգիսեանի եւ Ժան Օղասապեանի, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բազրատունիի, ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ Միքայէլ Վայէճեանի, ՀԿԲՄ-ի ատենապետ Պէյրուքի քաղաքապետութեան անդամ Արամ Մալեանի, ՄԴՀԿ-ի մասնաճիւղերու, կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող միութիւններու ատենապետներուն, լիբանանահայ մշակութեային, մարզական եւ ընկերային միութիւն-

ներու ներկայացուցիչներուն, հնչակեաններու եւ լիբանանահայերու հոծ բազմութեան: Հանդիսութիւնը սկսաւ լիբանանեան, հայաստանեան եւ Ս.Դ.Հ.Կ.ի քայլերգներով, կատարողութեամբ Հ.Մ.Մ.ի փողերախումբին: Բացման խօսքով հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ. «Տիրուհի» Ուսանողական երիտասարդական Միութեան վարչութեան ատենապետ Ընկ. Անդրանիկ Սալպաշեան: Ան նշեց, որ Քսանները գաղափարական եւ

ազգային ներշնչումի անսպառ աղբիւր են, սերունդներ դաստիարակելու յաւերժական նիւթ, արդար հպարտութիւն պարգեւող պատմական երեւոյթ: «Միջազգային թէ տեղական, ազգային թէ ընկերային բարդ եւ անակնկալներով հարուստ այս ժամակաշրջանին մէջ, Քսաններուն առաջին թելադրանքը անպայմանօրէն կը վերաբերի կեցուածքի եւ սկզբունքի: Գաղափարական գեանի վրայ ունեցած խոր զարգացումն էր, որ Քսաններուն ընձեռեց ճշգրիտ ուղին որդեգրելու գիտակցութիւնը: Մակերեսայնութիւնը, տեսութեան հանդէպ արհամարհելի կեցուածքը, որոնք ժամանակի տարածուած մտածելակերպն էին, չեղան Քսաններունը», ըսաւ Ընկ. Սալպաշեան: Անոր խօսքով, Հնչակեան նահատակները մարտիկներն էին աշխատաւոր ժողովուրդին, անոնց աշխատանքը ցուցամոլական գունաւորում չստացաւ, իսկ խօսքին միացաւ գործն ու բազուկը: «Քսանները մեր պայքարներուն եւ գերագոյն պայքարին կողմնացոյցն են: Անխափան, անդաւաճան, միքրոմեթրի ճշգրտութեամբ աշխատող: Մենք ինքնավստահ ենք, նոյնիսկ ակամայ տատամսումներն ու պատահական սայթաքումները չեն կրնար մեզի համար ճակատագրական ըլլալ: Կ'ըլլան միայն անցողիկ», ըսաւ Ընկ. Անդրանիկ Սալպաշեան: Ան հաստատեց, որ Քսանները պայքարը կը շարունակուի, Քսան հազարներու մասնակցութեամբ:

Շաբ.ը էջ 19

Երեւանում Ոգեկոչուեց Հնչակեան 20 Նահատակների Յիշատակն Ու Պարգեւատրուեցին Հայրենիքի Պաշտպանները

Երեւանում ոգեկոչուեց 1915 թ. Յունիսի 15-ին Պոլսի Սուլթան Բայազիտ հրապարակում կախաղան բարձրացուած Հնչակեան 20 նահատակների յիշատակը:

«Առնօ Պապաճանեան» սրահում տեղի ունեցած երեկոյին մասնակցում էին ՀՀ սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեանը, Արարատեան հայրապետական թեմի առաջնորդ Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանը, քաղաքական գործիչներ, հոգեւորականներ:

Տէր Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանն իր ելոյթում ընդգծեց, որ ներկաները նուիրական զգացումով հաւաքուել են՝ ոգեկոչելու Հնչակեան 20 ազատամարտիկ քաջորդիների յիշատակը, որոնք 1915թ. Յունիսի 15-ին Ստամպուլի Պայազիտ հրապարակում կախաղան բարձրացուեցին:

«Վահան Թէքէեան, ով բոլորիդ ծանօթ է, շատ յուզիչ խօսքեր է ասում այդ իրադարձութեան մասին, եւ դժուար թէ որեւէ հայ իր ողջ զգայարաններով չզգայ եւ չապրի այդ մէկը, երբ կարդայ այդ խօսքերը. «Բայց եւ ինչպէս մենքդ ալ վերջին պահուն ձեր դիմաց երազային, շատ պայծառ ուրիշ արեւ մը տեսաք ու ճոճեցաք օդի մէջ զայն մեղէ վերջը ջրհազ», - նշեց Կճոյեանը՝ աւելացնելով, որ «ասաս է եղելութիւնը, որի ոգեկոչման համար մենք հաւաքուել ենք: 19-րդ դարի վերջերին հայ պատմութեան նոր էջեր եղան: Բարբարոս թուրքը իր հրէշլաւոր ծրագիրն էր իրականացնում՝ նպատակ ունենալով աշխարհի վրայ թողնել մէկ



հայ, այն էլ՝ թանգարանում»:

ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Սեդրակ Աճեմեանը իր ելոյթում ուրախութիւն յայտնեց հայ քաղաքական, ռազմական ու չեղափոխական մտքի տիրաններից Փարամազին եւ նրա 19

ընկերներին յիշելու, նրանց յիշատակը ոգեկոչելու համար: «Քսանները հայ ժողովրդի պատմութեան անբաժանելի մասն են, եւ, ինչու ոչ, այդ պատմութեան կերտողներ են: Քսանների մասին յիշողութիւնները, պատմները եւ լե-

շունչ ու փափկասիրտ ապրումներու մասին, տառապի սիրով, բնութեամբ եւ հոգեթրթիւ խռովքներով: Սակայն, Պարոյր Սեւակի պարագան այլ է. անոր գործերուն հայրենասիրական կալուածը խրոխտ ու պինդ կեցուածքն է, սիրտէ աւելի միտքն է տիրական: Իսկ ընդհանրապէս անոր տողերը իմացական եւ փիլիսոփայական մտորումներու եւ խոհերու խտացումն է. նոր միտք մը կը յաջորդէ միւսին: Հետեւաբար, կարելի է բնութագրել՝ որ ան իմացապաշտ գրագէտ է: Ան չի վախնար կեանքէն եւ մանաւանդ՝ տառապանքէն՝

Ասումեմ, թէ մի բան կայ լոկ, Որ անձնապէս մեզ-միմակ են սովորում.

-Գիտութիւնը տառապանքի կամ՝

Դու սիրոյ հետ միշտ հաշտ ապրիր, բայց

խոյս մի տայ տառապանքից. Նա սրբում է աչքը փոշուց, նա մաքրում է հոգին ժանգից:

Տառապանքից չեն մեռնում, չէ՛, այլ աւելի են պնդանում,- Ապափնուած սիրտը յետոյ գալիքցաւը հեշտ է տանում:

Ան կեանքին կը նայի այնպէս, ինչպէս որ է: Ո՞վ կ'ուզէ ծերանալ, ո՞վ կ'ընդունի որ ծերացած է, ո՞վ անխուսափելի ծերութիւնը չ'անիծեր, ո՞վ ծերութեան կը նայի շեշտ կերպով եւ կ'ընդունի հեզանքով. դեռ երիտասարդ գրեց՝

Ծերանումեմք մարոյր Սեւակ, ծերանումեմք սիրելիս:

Նայեցէ՛ք ձեր շուրջ, տեսէ՛ք, նանչեցէ՛ք մարդիկը եւ ինչքան պիտի մկատէք:

Սո՛ւտ է: Նա միայն իր փորն է սիրում: Ամէ՛ն ինչից շատ, ամէ՛ն ինչից վեր

Գաղափարական իր հօրն է սիրում... Սո՛ւտ է: Ո՛չ հօրք, ո՛չ մօրն է սիրում, Թա՛նկ չէ ո՛չ որդին, եւ ո՛չ էլ թոռը:

Ամէ՛ն ինչից շատ, ամէ՛ն ինչից վեր սիրում է կեանքում նա իր... աթոռը: Աթոռն է սիրում՝ Ու նրան տիրում.

Ցանկացած գնով ելնում է նա վեր, Փորձում է թոչնել նա առանց թեւեր, Անվերջ սողալով առաջ է գնում,

Գնում է այսպէս եւ... տարեց-տարի

Ելնում է այսպէս... շալակն աշխարհի...

Մարդ կայ աշխարհն է շալակն է տանում, Մարդ կայ՝ ելել շալակն աշխարհի...

Ականջը խօսի... ամենուրեք

ՅՈՒՆ. ԲԱԳՐԱՏ Ծ. ՎՐԴ. ՊԵՐՃԵՔԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ



Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.ի հաւանութեամբ եւ թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի կարգադրութեամբ թեմական խորհուրդի որոշումով Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամ Հոգշ. Տ. Բագրատ Վրդ. Պերճեքեան Արեւմտեան Թեմի առաջնորդական փոխանորդ նշանակուեցաւ:

Հոգշ. Բագրատ Վրդ. անցեալ Չորեքշաբթի Յունիսի 15ին հոգեպարար արարողութեամբ Ս. Ղեւոնդ Մայր Տաճարին մէջ ստացաւ Ծայրագոյն վարդապետի կոչում: Արարողութեան նախագահեց առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան, մասնակցութեամբ տասնեակ մը հոգեւորականներու:

Ծայրագոյն վարդապետի շնորհման արարողութեան ներկայ էին նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, թեմական

ժողովի ատենապետ իրաւաբան Ժողովի Կանխմեան, Ս.Գ.Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութիւնը գլխաւորութեամբ ատենապետ ընկ. Գրիգոր Խոտանեանի եւ այլ կազմակերպութեանց ու մամուլի ներկայացուցիչներ:

Այս առթիւ թեմի բարեջան առաջնորդ Յովնան Սրբազան իր հոգեւոր պատգամին մէջ զնահատեց Հայր Բագրատի արժանիքներն ու բարեմասնութիւնները, վարչական եւ հոգեւոր ծառայական կեանքին մէջ: Իր պատասխան խօսքին մէջ Հայր Բագրատ շնորհակալութիւն յայտնեց շնորհուած պատիւին համար խոստանալով իր օգտակար ներդրումը կատարել մեր համայնքին:

Եկեղեցական արարողութեան յաջորդեց պատշաճ ընդունելութիւն, որուն աւարտին ներկաները իրենց շնորհակալութիւնները փոխանցեցին նորանաշաբակ փոխ առաջնորդին:

Վիտացոյ պետական այրերուն:

Իրաւ Բաղաբաշիմ, ճշմարիտ հայրենաւեր եւ յանձնառու մտաւորականը պէտք է իրերը կոչէ իրենց իսկական անուններով: Ահա այսպէս.

Աղաչում եմ.-

Մի՛ վրդովուէք, եթէ ասեմ Փառաւերիմ հե՛նց փառասէր, Ո՛չ թէ համեստ. Սրիկայիմ՝

հե՛նց սրիկայիմ,

Ո՛չ թէ ազնիւ:

Ինչ համեստ արտաքինով փառասէրներ կան մեր շուրջ: Ինչ սրիկաներ՝ որոնք որպէս ազնիւ մարդիկ հանդէս կու գան ազգային, քաղաքական, պետական, իրօսական ասպարէզներու մէջ: Նմաններուն եթէ այս տողերը նուիրես՝ չեն անդրադարձանար, որ փառասէրներ են կամ սրիկաներ...:

«Անլռելի Ձանգակատուն», «Եռաձայն Պատարագ», «Եւ Այր Մի Մաշտոց Անուն», «Եղիցի Լոյս», «Մարդը Ափի Մէջ», «Անմահները Հրամայում են» եւ այլ հատորներու ընթերցմամբ մեր դիմաց կը յառնի ինքնատիպ լեզուամտածողութեամբ, պատկերաւոր արտայայտչութեամբ, բառախաղերու վարպետութեամբ հզօր քերթողը: Կարելի է հաստատել, որ Պարոյր Սեւակ արեւելահայ պոէզիայի երեք հիմնասիւններէն մին է՝ Յովհաննէս Թումանեանի եւ Եղիշէ Չարենցի կողքին:

Անուննի դերասան Պետրոս Աղամբանի մասին Պարոյր Սեւակ կը գրէ. «Նորարար ծնունդ են եւ ոչ թէ դառնում».

նոյն բնութագրումը կարելի է շնորհել այս խօսքի հեղինակին: Ան հաստատապէս նորարար էր իր ոլորտին մէջ:

Դիմենք Օննիկ Սարգիսեանի գրիչին՝ Պ. Սեւակի մահուան առիթով գրուած. «Կորսնցուցինք աշխարհի եւ մարդուն ներդաշնակութեան նուիրուած կախարդ բանաստեղծը: Ան՝ որ հակած մարդկային հոգիին վրայ՝ կը ջանար ձանձնալ հոն ծուրած արատներն ու թերութիւնները, մթութիւններն ու անձկութիւնները: Ազատելու համար իր նմանը մանր ու մանրուք հաշիւներէն, ցաւերէն, որոնք, բանտուած, երբեմն կը վերածուին փոթորիկի՝ գաւաթի մը մէջ:- Քացիսած եսի բռնակալութիւն, որ կը թունաւորէ նախ ենթական, ապա՝ շրջապատը:

Ա՛յ մեզի հետ չէ բանաստեղծը, որ միայն քնարական խօսքի վարպետը չէր, այլ անկեալ բարբերու եւ մոլորութեանց քննադատ, թերութիւններու եւ թերացումներու խարագանիչ, մաքրելու համար ընկերութիւնը ամէն կարգի փարիսեցիներէ, մաքսաւորներէ, ցեցերէ, մակաբոյծներէ: Անոր ստեղծագործութեան կարեւոր մէկ տոկոսը հրապարակագրայինի կը կենայ մօտիկ՝ խարանդով ընկերութեան մէջ այլասերածները, աղանի վաճառողները, սրբութիւններ պղծողները: Այս մարդին մէջ յանդուգն է գրիչը, բայց՝ կիրթ, կծու են բառերը, եւ խօսքը՝ դիպուկ»:

Ապա՝ «Համբաւի հասած բազում բանաստեղծներ ունինք: Մարդիկ կը յաջողին հանրածանօթ դառնալ, քիչերուն տրուած է անմահութեան հասանիլ:

Պարոյր Սեւակ «հասած էր հոն»: Ուրեմն՝ եւ անմահ եւ անլռելի է Պարոյր Սեւակ:

«ՖՈՒԼԵԱՅՖ» ՈՒԱՇԻՆԳՏՈՆԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ՆԱԵՒ ՀԱՅԵՐԸ



Ուաշինգտոնում ամէն տարի անցկացնող Սմիթսոնեան ինստիտուտի «Ֆոլքլոյֆ» ազգային կեանք փառատօնին այս տարի կը մասնակցեն նաեւ հայ երաժիշտներ Հայաստանից եւ Կալիֆորնիայից՝ ներկայացնելով հայկական էթնիկ երաժշտութիւնը ժամանակակից նորարարական հնչիւնային ձեւաւորմամբ: Հետաքրքիր է, որ Կալիֆորնիայի հայ արուեստագէտներն իրենց խումբն անուանել են «Հայկական հանրային ռադիօ», իսկ Հայաստանից նրանց միացող թումբի աշակերտներից կազմուած խումբը կոչուած է «Թմբաթա»՝ հայկական երաժշտութեան հնչիւնների նմանութեամբ:

«Հայկական հանրային ռադիօն» կամուրջ է կառուցում ժամանակակից եւ հայկական ժողովրդական երաժշտութիւնների ոճերի միջեւ՝ նոր հեռանկար ստեղծելով հայկական ժողովրդական երաժշտութեան համար, որը կարողացել է դիմակայել ժամանակի փորձութեանը: Լոս Անջելէսում հիմադրուած ակուստիկ տրիօյի անդամները Արեւմտեան Հայաստանից մինչ Միացեալ Նահանգներ տեղափոխուելը, Սիրիա եւ Լիբանան արտագաղթած հայ ընտանիքների երեխաներ են, ովքեր մեծացել են Կալիֆորնիայում:

Ապրելով երաժշտական առումով աշխոյժ հայկական Սփիւռքում՝ այս արուեստագէտները վերարտադրում են իրենց մանկութեան հայկական մեղեդիներն առաւել նորարարական, ժամանակակից ու խանդավառ ոճով, ինչն իր մէջ նաեւ կրում է իր ժողովրդի բազմասերունդ բողոքը: Հայկական «Հանրային ռադիօն» իր մշակումները կատարում է ժանրային խառնուրդով, եւ բոլոր երգերը միայն հայերէն են՝ մայրենի լեզուով:

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ . Մհեր Աճամեան, կիթառիստ, պերկուսիոնիստ . Ռայան Դեմիրճեան, կիթառիստ .

Սարո Քուշակեան, վոկալիստ, կիթառիստ Թմբաթա ԵՐԵՒԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան (ԱՄՆ ՄԶԳ) եւ Սմիթսոնեան ինստիտուտի համագործակցութեան շրջանակում Հայաստանում գործող «Իմ Հայաստան» My Armenia ծրագրի աջակցութեամբ, Վաշինգտոն են մեկնելու նաեւ Երեւանի ԹՈՒՄՕ-ի երաժշտական ծրագրերից մէկի՝ երիտասարդական ժողովրդական ուոկ խմբի «Թմբաթայի» անդամները: Փառատօնի որոշ ներկայացումների ժամանակ «Հայկական հանրային ռադիօյին» կը միանան թումբայականները՝ «Բամբիւ» խմբից Արիկ Գրիգորեանի ղեկավարութեամբ: Նրանք հայկական ժողովրդական երաժշտութեան հիման վրայ կատարում են օրիգինալ ստեղծագործութիւններ՝ համադրուած ուոկի եւ փորձարարական (էքսպերիմենտալ) երաժշտութեան հետ: Խմբի անդամները 30 դեռահասներ են, ովքեր սովորում են երաժշտութեան մշակման բոլոր փուլերը, ներառեալ կատարումը, ձայնագրումը, համադրումն ու կատարելագործումը: «Թումբօ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը 12-18 տարեկան դպրոցականների համար նորարարական դպրոցական ծրագիր է:

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ . Արիկ Գրիգորեան, գեղարուեստական ղեկավար . Ամալիա Յակոբեան, վոկալիստ . Թամարա Աթանէսեան, վոկալիստ . Լիլի Ալեքսանեան, վոկալիստ . Քրիստինէ Նոյրազարեան, վոկալիստ . Լիդա Գեւորգեան, վոկալիստ . Էլէն Աթանէսեան, վոկալիստ . Ալիսա Սուքիասեան, բասիստ . Աստղիկ Մախսուդեան, պերկուսիոնիստ, վոկալիստ . Ժիրայր Տէր-Օսիպեան, կիթառիստ . Արտակ Ղազարեան, ֆլէյտահար . Հայկական հոգեւոր երաժշտութիւնը շուեցարիայում ներկայացրել են փոքրիկ երգիչները

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՇՈՒԵՑԱՐԻԱՅՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՆ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐԸ



«Հայաստանի փոքրիկ երգիչները»- ի հերթական շրջագայութիւնը: Երգչախումբն օրերս է վերադարձել Շուեցարիայում կայացած 25-օրեայ համերգային շրջագայութիւնից: Այն նուիրուած էր Հայաստանի անկախութեան 25-ամեակին: Շրջագայութիւնից ստացած տպաւորութիւնների եւ առաջիկայ անելիքների մասին այսօր նրանք խօսել են լրագրողների հետ:

Հարուստ կենսագրութիւն ունեցող «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբն արդէն երրորդ անգամ հայկական հարուստ մշակույթը ներկայացնում է շուեցարացի ունկնդրին: 16 համերգներով երկրի ֆրանսիական, իտալական եւ գերմանական հատուածների եկեղեցիներում, տաճարներում ու համերգասրահներում հնչել է հայ հոգեւոր, ժողովրդական, ժամանակակից ստեղծագործութիւններ ու արտասահմանեան հեղինակների դասական երգեր:

Երգչախումբը բարձր ընդունելութեան է արժանացել ունկնդրի կողմից: Շարականներ երգելուց առաջ երգչախումբը նախ փոքրիկ պատմական ակնարկ է անում երգի վերաբերեալ: Ըստ երգչախմբի գեղարուեստական ղեկավար Տիգրան Հեքեքեանի՝ սովորաբար կատարում են 5-րդ դարի շարականները, ինչը զարմացնում է օտարերկրացի ունկնդրին: «Երբ մենք ասում ենք, որ սա 5-րդ դար է՝ մտածելու տեղիք է տալիս: Եթէ այս ժողովուրդն ունեցել է նման տիեզերական երաժշտութիւն, ինչպէս նա կարող է լինել

բարբարոս, ինչպէս մեզ շատ այլազգի լրատուամիջոցներ ներկայացնում են արտերկրում»:

Համերգային ծրագրից բացի երեխաները շրջել են Շուեցարիայի տեսարժան վայրերով, այցելել շուեցարական հանրայնաշուկայի եւ պանրի գործարաններ, տեղում ծանօթացել պատրաստման եղանակին ու համտեսել:

Երգչախմբի Ֆրիբուրգի սբ. Միշէլ եկեղեցում ունեցած ելույթը հեռարձակուել է շուեցարական յայտնի Espace ռադիոկայանով: Համերգներից յետոյ բազում հիացական խօսքեր են հնչել երգչախմբի բարձր կատարողականութեան մասին: «Ես միշտ ասել եմ իմ ղեկավարած երգչախմբերին, որ երաժշտութեան մէջ ամէնից կարեւորը լաւագոյնին ձգտելն է, քանի որ կատարելիս հասնելը անհնար է՝ սակայն Հայաստանի փոքրիկ երգիչներին լսելուց յետոյ հասկացայ, որ սխալուել եմ»,- ասել է կոմպոզիտոր Անդրէ Դիւկդէն:

Սեպտեմբերին երգչախումբը պատրաստում է յաջորդ շրջագայութեանը՝ Դանիա, Նիդեռլանդներ, Ֆերմանիա, որը նույնպէս նուիրուած է Անկախութեան 25-ամեակին: Սակայն մինչ շրջագայութիւնը՝ երգչախումբը յունիսի 21-ին պատրաստում է «Ճերանգ» խորագրով համերգին, որն նուիրուած է կոմպոզիտորներ Էդուարդ Միրզոյեանի, Աննօ Բաբաջանեանի, Ղազարոս Սարեանի, Ալեքսանդր Յարութիւնեանի եւ Ադամ Խուրոյեանի յոբելեաններին:

MEHER BABIAN, D.D.S. General Dentistry. 1111 S. Glendale Avenue Suite 206 Glendale, CA 91205. Tel: (818) 547-0884 Tel: (818) 547-1476

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ. Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) * \$50,00 * \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas. Name: Address: City: State: Zip Code: Country: Tel: Email:

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

«ՄԱՐԴՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՃԱՌԱԳՈՒՄԸ»
ՅԵՂԻՆԱԿ Ռ. ԿՈՐԻՒՆ


Օրերս լոյս տեսաւ իրանահայ կրթական գործիչ, արձակագիր-լրագրող Ռուբէն Քէչիշեանի չորրորդ գիրքը վերոնշեալ վերնագրով:

Գունաւոր կազմով, 404 մեծագիր էջերէ բաղկացած: Գրքի հեղինակը Ռ. Կորիւնը արդէն ծանօթ անուն է ընթերցող հասարակութեանը, քանզի անոր տարբեր նիւթերու առնչուող այժմէական եւ հետաքրքիր գրութիւնները համարեալ ամէն շաբաթ կ'երեւան տեղական, Հայաստանի եւ իրանի հայկական թերթերուն մէջ: Ռ. Կորիւնը գիրքը նուիրած է Արցախի ազատագրութեան հերոսներուն: Գիրքը ներկայացրած է «Գիտակ» պարբերաթերթի խմբագիր, գիտութիւններու դոկտոր Խաչկարը (Կարէն Խաչատրեան) որ վերլուծած եւ գնահատած է Ռ. Կորիւնի գրական շնորհն եւ ունակութիւնները:

Գիրքի 300էն աւելի էջերուն մէջ տեղադրուած են հեղինակի անցած ճանապարհին տեղի ունեցած իրադարձութիւնները, հանդիպումները, որոնք գրի առնուած են ամենայն անկեղծութեամբ եւ կը կարդացուին հաճոյքով: Իսկ մնացեալ էջերուն մէջ ամփոփուած են հեղինակի ապրումները, չափածոյ ստղերը եւ պաշտամունքի համոզմաները, հայոց լեզուի, հայ մշակութի եւ դպրութեան հանդէպ: Այս բաժնի սկզբին գրուած է մեծն Մաշտոցի արձանի պատկերը, որ պատշէլի է բոլորիս համար:

Գիրքի վերջին էջին մէջ շապիկի վրայ գետեղուած են հեղինակի նկարը եւ կենսագրականը:


«Մարդու Առաքինութեան Ճառագրումը» գիրքը իր հետաքրքիր բովանդակութեամբ, հայրենասիրական գեղումներով տողորուած տողերով, առաջին իսկ վայրկեանէն կը գրաւեն ընթերցողը: Մեզ կը մնայ շնորհաւորել վաստակաշատ արձակագիր Ռուբէն Քէչիշեանին (Կորիւն) իր չորրորդ գրքի հրատարակման առիթով եւ սպասել նորանոր հատորներու: Համոզուած ենք որ Ռ. Կորիւնը իր արժանի տեղը կ'ունենայ հայ գրական անդամաստանին մէջ:



Շնորհակալութեամբ ստացանք բեղուն մտաւորական, վաստակաւոր արձակագիր, «Մասիս» թերթի մնայուն աշխատակից Պողոս Արմենակ Լազիսեանի «Պատարագ Արմին-Հայերի Նախնիներին» ստուարածաւալ եւ պատկերազարդ հատորը 384 էջերէ բաղկացած, գունազեղ եւ ճաշակաւոր շապիկով:

Մեր ընթերցողներուն ծանօթ անուն է հեղինակը, որ իր բովանդակալից ու հետաքրքրական յօդուածներով հանդէս կու գայ տեղական հայկական թերթերուն մէջ:

Գրքի մէջ տեղադրուած են քանի մը տասնեակ պատկերներ, քարտէսներ եւ պատմական Հայաստանին պատկանող շարք մը կառուցանքներ: Հետաքրքրական եւ պատմական բնոյթ կրող գիրք է Պողոս Լազիսեանի սոյն աշխատութիւնը, որ անկասկած պիտի գրախօսուի մեր պատմագէտներու եւ կամ պատմութեանը տեղեակ գրողներու կողմէ:



Կամ պատմութեանը տեղեակ գրողներու կողմէ:

ՀԱՅՐԱԿԱՆ Ռ. ԿՈՐԻՒՆ

Գրութիւնն այս օրս եւ մօրս եւ ձօնում, որ անմոռաց յիշուեն՝ սրտի, աշխատանքի, հոգու եւ մտքի քերթ բարիքները:

Ինչպէս կարելի է չիշել՝ գորովալից, սիրելի մայրիկին, կեանքի արեւին: Ինչպէս կարելի է չիշել՝ տան սուրհին, սիրելի հայրիկին, օջախի պաշտպան-ապաւեմին, պաշտելի էակներին:

Յիշելով օրս՝ անմեռ պատառիկներ եւ անցնում մտքովս, դէմքը նրա՝ երբեմն մտածկոտ եւ ինքնամփոփ, ինչպէս երկինքն ամպոտ, երբեմն ուրախ ու պայծառ, ինչպէս արեւը վառ, տան եւ դրսի արտացոլանք: Նրա կեանքն է պատկերում, յուշերս եւ արթնանում, ալբոմի պէս թերթում մէկ-մէկ, թէ նա ինչպէս մտքերով տարուած գրութիւն անում, նամակներ գրում եւ նկարում, հոյակապ ձեռագրով համբերատար տառեր է շարում ոսկեհատ, մետաքսի թելերի նման նուրբ ու գեղանի գովասանքով լի:

Թէ նա ինչպէս հոգատար մեր բակի ծառ-ծաղկին խնամք էր տանում, հասած պտուղի երախտալիքը նշխարի պէս սրան-նրան բաժանում: Որքան էր սիրում ծաղկած նոռնի խաղողի որթ ու թզնի, որոնց պատկերը անջինջ մնում են քանդակուած հնադարեան տաճարների սրբատաշ քարերին, սէրը գալիս էր պապերից:

Նա գիւղական ուսում ունէր, գիւղում նաեւ վարժապետ էր: Եկեղեցու երգ ու ծեսին գիտակ կատարում էր բարձրորակ:

Նամակներ էր գրում «Ռադիօ Երեւան»-ին, երկար ժամեր թղթին հակուած,

մտքերի մէջ ընկղմուած: Բժախնդիր էր՝ անսխալ նամակ յղել, գեղեցիկ եւ իմաստալից: Խանդաղատանք ու գովասանք հայրենիքին ձօնել: Ազգասիրական ու հայրենասիրական երգերի պատուէր ընտանիքի եւ հարազատների անուններ: Նա շատ էր սիրում՝ Ռ. Պատկանեանի՝ «Մայր Արաքսի ափերով...» երգը, երգում էր խնճոյքներում խորհրդաւոր լրջութեամբ, մտորման թախիծ առթում, կորուստները յիշում: Ունէինք մեծկակ տուփի պէս Telephoncan մի ռադիօ, որով հայրս «Ռադիօ Երեւան»-ն էր լսում, Վազգէն կաթողիկոսի տօնական քարոզիմ սպասում, երբեմն փարագիտն էր խուժում, ծայրը խափանում, սակայն անկոտորում, սիրով առ լեցում, սլաքն էս կողմ-էն կողմ էր անում, մինչեւ ծայրը պարզուում: Նրանով ուրախանում էր, նրանով հպարտանում էր, օրրանը հայկական ուժ էր տալիս լինելութեան:

Հայրս մեր տան հացբերն էր, նրա արդար աշխատանքով մենք սնուում, մեծանում եւ հասակ էինք նետում: Նուիրումով ընտանիք պահեց, համեստ ու խնայողաբար կեանք տնօրինեց, ճիգ ու ջանք չխնայեց, անխոնջ վազելվազով, ծնող զաւակներով, աշխատանքի լծուած, աղիւսը աղիւսին դնելով բնակարան կառուցեցինք Նարմաք քաղաքամասում:

Հայրս սիրում էր օգնել՝ կարօտեալի ձեռք բռնել, անգործին գործ հայթայթել, անյոյսին յոյս ներշնչել, աշխատանքի մղել: Նա կեանքում ինքնուրոյն իր ուժերին յենուած՝ որպէս հաւքն իր թելերին նա կեանք ապրեց: (հատուած՝ «Հայրական պոեմ»-ից)

«ՊԱՏԱՐԱԳ ԱՐՄԻՆ-ՀԱՅԵՐԻ ՆԱԽՆԻՆԵՐԷՆ»
ՅԵՂԻՆԱԿ ՊՕԴՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Շնորհակալութեամբ ստացանք բեղուն մտաւորական, վաստակաւոր արձակագիր, «Մասիս» թերթի մնայուն աշխատակից Պողոս Արմենակ Լազիսեանի «Պատարագ Արմին-Հայերի Նախնիներին» ստուարածաւալ եւ պատկերազարդ հատորը 384 էջերէ բաղկացած, գունազեղ եւ ճաշակաւոր շապիկով:


Մեր ընթերցողներուն ծանօթ անուն է հեղինակը, որ իր բովանդակալից ու հետաքրքրական յօդուածներով հանդէս կու գայ տեղական հայկական թերթերուն մէջ:

Գրքի մէջ տեղադրուած են քանի մը տասնեակ պատկերներ, քարտէսներ եւ պատմական Հայաստանին պատկանող շարք մը կառուցանքներ: Հետաքրքրական եւ պատմական բնոյթ կրող գիրք է Պողոս Լազիսեանի սոյն աշխատութիւնը, որ անկասկած պիտի գրախօսուի մեր պատմագէտներու եւ կամ պատմութեանը տեղեակ գրողներու կողմէ:

«ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ, ԿԱՍ ՏԱՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ»
ՅԵՂԻՆԱԿ ՅԱԿՈՒ ՏԵՐԵԱՆ

Շնորհակալութեամբ ստացանք Յակոբ Տէրեանի գրքին պատկանող 98 էջանոց գրքոյկը, հայերէն եւ անգլերէն լեզուներով, որ լոյս տեսած է 2015 թուականին: Այս հատորը տպագրուած է երկրորդ անգամ եւ պատուէրներու փոքրիկ ժողովածու է, որով հեղինակը կը փորձէ ուղղութիւն ցոյց տալ երիտասարդներուն, քաջալերել որ աւօրեայ կեանքին մէջ ըլլան ճշմարիտ, անաչառ եւ անկողմնակալ: Որոշ էջերու մէջ կան նաեւ համապատասխան չափածոյ ստղեր:

Հետաքրքրական գորքոյկ մըն է Յակոբ Տէրեանի սոյն աշխատութիւնը, որ յոյսով ենք կը կարդան մեր երիտասարդները, եւ այն մարդիկ, որոնք ծանօթ են մեր մայրենի լեզուին:



ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻՒ ԸԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆ ՈՒՏԵԼԻՔԻ ԶԳԱՅՆՈՏՈՒԹԻՒՆԸ-Allergy

Կարգ մը փոքրիկներ ուտելի էտք կը զգան սիրտխառնուք, քերոււք կամ որեւէ այլ անկանոնութիւն: Ծնողքը զինք կ'ուղղեն զգայնոտութեան-allergy մասնագէտի: Կարգ մը քննութիւններ կատարելէ ետք մասնագէտ բժիշկը կը կազմէ ուտելիքներու ցանկ մը, որ կը պարունակէ փոքրիկին համար արգիլուած ուտելիքներ, որոնք կը համարուին զգայնոտութեան պատճառը: Հարցը կը բարդանայ, երբ կարգ մը փոքրիկներ նոյնիսկ բժիշկին ցուցմունքներուն հետեւելէ ետք դարձեալ ցոյց կու տան զգայնոտութեան նշաններ: Կը կատարուի երկրորդ քննութիւն եւ յայտնի կը դառնայ թէ զգայնոտութեան պարագան կարծուածէն աւելի բարդ է: Արգիլուած ուտելիքներու ցանկը կը մեծնայ:



Թէ շատ մը պարագաներու մանկաբույժը անձանթ է այս սխալներուն: Այս քննութիւնները 20 տարիէ ի վեր կ'օգտագործուին: Սխալ ախտաճանաչման պատճառով շատ մը երեխաներ կ'ունենան ճնշուած-stressed կեանք մը: Երեխաներ եւ անոնց ծնողները կ'ըլլան անհանգիստ-anxious, սխալ ուտելիք չուտելու եւ կ'ըլլան միշտ զգոյշ արգիլուած ուտելիք չուտելու համար: Ախտորոշումը պէտք է կատարուի ճիշդ ձեւով մարդոց կեանքին մէջ յաւելեալ բարդութիւններ չստեղծելու համար:

Հարցը հոս այն է, որ կարգ մը քննութիւններ ճիշդ արգիլելները չեն տար: Սխալ քննութիւն կատարելու պարագային մենք կը ստանանք սխալ ախտորոշում: Հազարաւոր մարդիկ իրենք զիրենք հեռու կը պահեն կարգ մը ուտելիքներէ սխալ ախտորոշում կատարելէ ետք: Մասնագէտներ կը յայտնեն

ՍՆՆԴԱԿԱՆՈՆՆԵՐՈՒ ԺԽՏԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԶԵՐ ՈՒՂԵՂԻՆ ՎՐԱՅ

Մանդականոնի հետեւիլը դարձած է նորաձեւութիւն: Մարդիկ կ'այցելեն սննդականոնի մասնագէտներու, կը հետեւին խիստ ցուցմունքներու բարեձեւ մարմին ունենալու համար: Երբեմն այդ սննդականոնները կրնան ժխտական հետեւանքներ ունենալ մեր ուղեղի գործունէութեան վրայ: Ուղեղին նախասիրած ուտելիքներն են իւղով հարուստ, քիչ ածխաջրածին-carbohydrate պարունակողները: Ածխաջրածին պարունակող ուտելիքները՝ գոց գոյն շաքարը, քինոսան, լման հացը եւ այլն կրնան

երկար ժամանակի վրայ վնասել մեր ուղեղին եւ պատճառել շատ մը հիւանդութիւններ ինչպէս այլհայմըր, տիմենթիա, ADHD, գլխու ցաւեր: Այս ուտելիքներու օգտագործումը նուազեցնելով եւ լաւ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներ օգտագործելով մենք պիտի օգնենք մեր ուղեղի լաւ աշխատանքին: Ըստ մասնագէտներու շաքարի շատ օգտագործումը եւ վատ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներու օգտագործումն է ուղեղի եւ սրտանոթային անհանգստութիւններու իսկական պատճառը:

ԵԳԻՊՏԱՑՈՐՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՀՐԱՇՔՆ Է

Եգիպտացորենը միակ լայն սպառում ունեցող ուտելիքն է, որուն բոլոր մասերը ոսկի կը պարունակեն, 100 կրամ հատիկները կը պարունակեն 0.5 միքրոկրամ Au, մինչ մարդու մարմնի պահանջարկը կը տարուբերի 2-4 մկ սահմաններուն մէջ:



Ոսկիի ազդեցութիւնը մարմնին վրայ՝
 * Չափահաս մարդու մարմնին մէջ կայ մօտ 10 մկ Au, որուն մօտաւորապէս կէսը կը գտնուի ոսկորներուն մէջ, մնացեալը լեարդին ու երիկամունքներուն մէջ:
 Ոսկիի կենսաբանական դերը մարդու մարմնին մէջ կարօտ է յետագայ ուսումնասիրութեան, սակայն յայտնի են որոշ օգտակար յատկութիւններ:
 * Անիկա կը խթանէ մարմնի մէջ պղինձի իւրացումը:
 * Կը նպաստէ խոնաւցնող յատուկ նիւթերու աշխուժացման:
 * Յատուկ հաշուարկուած չափերը կը կիրարկուին աթերոսքլերոզի, օսթէոխոնարոզի, փարոտոնդոզի, լեարդի հիւանդութիւններու, ընկճախտի պարագային:
 * Ոսկին կը զօրացնէ արծաթի հակաբորբոքային յատկութիւնները, ունի հակավարակային ազդեցութիւն:

* Կը բարձրացնէ դիմադրողականութիւնը:
 Ոսկիի եւ եօտի համադրութիւնը.
 * Եօտացուած ոսկին յայտնի է իբրեւ հակակարծրախտային (սքլերոզ) դեղորայք, որ չունի հակաուակ ազդեցութիւններ եւ յաճախ կը կիրարկուի ծերացող մարմնին բնորոշ հիւանդութիւններու բուժման համար: Անիկա հնագոյն ժամանակներէն յայտնի միջոց է:
 * Ոսկիի տարբեր՝ աղային միացումներու հիմքին վրայ կը պատրաստուի դեղորայք որոշ հիւանդութիւններու, ինչպէս փսորիազի հետեւանքով յառաջացած արթրիտի բուժման համար: Նման դեղերը կրնան յառաջացնել թունաւորում՝ չարաչահելու պարագային:

ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՅՈՒՇԵՆ ԱՂՋԿԱՆ ՍԸ ՍԻՐԱՅԱՐՈՒԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ աղջկան մը մօտ նկատուի են հետեւեալ նախանշանները, ուրեմն վստահաբար կարելի է ըսել, որ ան սիրահարուած է եւ յանուն իր ընտրեալին պատրաստ է դիմել իւրաքանչիւր խենթութեան:
 Սիրահարուածութեան ընթացքին կնոջ աչքերը կը սկսին փայլիլ, կ'ուզէ յաճախ ժպտալ, սէր տալ բոլորին, որպէսզի անոնք նոյնպէս ուրախ ըլլան: Այս ժամանակ կը նկատուի նաեւ ցրուածութիւն:
 Յանկութիւն կը յառաջանայ հիւանալի տեսք ունենալ օրուան ամէն պահուն՝ նոյնիսկ խանութ երթալու ընթացքին, քանի որ աղջիկը կը կարծէ, որ հաւանաբար այդ նոյն վայրկեանին սիրածը պիտի յայտնուի իր ճամբուն վրայ: Աղջիկը կը գնէ նոր զգեստներ, հագուստներ, շպարի միջոցներ, կը փոխէ իր ոճը, սանտրուածքը: Նոյնիսկ կը սկսի հետեւիլ իր մարմնի կազմուածքին՝ այցելելով մարզասրահ կամ սկսելով մարմնամարզութեամբ զբաղիլ:
 Մշտապէս ցանկութիւն կ'ու-

նենայ հեռաձայնելու կամ հաղորդագրութիւն գրելու անոր՝ թէկուզ առանց առիթի, պարզապէս գիտնալու համար, թէ ինչով զբաղած է ան եւ ի՞նչ կը ծրագրէ ընել երեկոյեան:
 Հետաքրքրութիւնը կը մեծնայ աստղաբաշխութեան նկատմամբ եւ եթէ այնտեղ որեւէ բացասական միտք գրուած ըլլայ, սիրահարուած աղջիկը չի հաւատար՝ մտածելով, որ սխալմունք եղած է:
 Պատկերասփիւռ դիտելու փոխարէն ան ժամանակ կ'անցնէ իր սիրելիին հետ: Անհասկնալիօրէն նախանձի զգացում կ'ունենայ:
 Սիրահարուած աղջիկը անսպասելիօրէն ձեռք կը բերէ նոր հետաքրքրութիւններ, օրինակ՝ կը դառնայ ֆոթօպոլասէր, կը համաձայնի երթալ ձկնորսութեան, կը խօսի ինքնաշարժներու մասին եւ այլն: Օրուան ընթացքին քանի մը անգամ կը փոխուի անոր տրամադրութիւնը՝ բնականաբար անսահման երջանկութեան մինչեւ ջղային տեսարաններ:

ՍԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՊԱՅՊԱՆԵԼ

Ուսումնասիրելով սէր երեւոյթը՝ հոգեբանները եկած են այն եզրակացութեան, որ իրականութեան մէջ սիրահարուելը շատ դժուր է, աւելի դժուար է պահպանել այդ զգացումը եւ ծունկի չիջնել տարբեր դժուարութիւններու առջեւ: Իսկ ինչպէ՞ս կարելի է պահպանել սէրը:
 Նոր հետաքրքրութիւններ եւ անհատական զարգացում.
 Մարդը միշտ կը փորձէ զարգանալ, ձեռք բերել նոր գիտելիքներ, հմտութիւններ, հետաքրքրութիւններ, փորձ: Այս ամէնը առաւել աշխոյժութեամբ կը կատարուի, երբ ան կը սիրահարուի:
 Այս ընթացքին ան կը հանդիպի նոր մարդոց, կը գտնէ նոր ընկերներ, կ'ապրի նոր զգացողութիւններ: Ասիկա բնական գործընթաց է, որ բնորոշ է բոլոր զոյգերուն: Իսկ բաժանման պարագային տեղի կ'ունենայ յետընթաց, քանի մարդիկ կը կորսնցնեն իրենց ձեռք

բերած ամէն ինչը:
 Յարաբերութիւնները պահպանելու համար պէտք է մշտապէս նոր երեւոյթներ փնտռել կամ ստեղծել: Սկզբնական շրջանին (6 ամիսէն մինչեւ 1 տարի) կարելի է բաժնել գաղտնիքները, պատմել հետաքրքրութիւններու եւ երազանքներու մասին:
 Մակայն անկէ ետք զարգացումը կանգ կ'առնէ: Այնուհետեւ կարելի է զաւակ ունենալ, քանի որ զաւակի մեծնալուն զուգընթաց, նոր աշխարհ կը բացուի անոր ծնողներուն համար, կամ փորձել գտնել նոր հետաքրքրութիւններ, որոնք հաճելի պիտի ըլլան զոյգերուն համար:
 Ըստ հոգեբաններուն՝ մշտապէս միասին ժամանակ անցնելը նոյնպէս կատարեալ չիմարութիւն է: Պէտք է ունենալ անձնական կեանք, որ պիտի հետաքրքրէ զուգընկերը, եւ դուք պիտի ըլլաք անոր ուշադրութեան կեդրոնին:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնէ՛ք՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19
Մտքիդ մէջ կարգ մը հարցեր կան, որոնք քեզ կը շփոթեցնեն: Ենթադրութիւններով մի խռովեր դուն քեզ, վստահէ իրականութիւններուն: Քու ներկայութիւնդ շատ կարեւոր է հաւաքի մը ընթացքին:
Բախտաւոր թիւերդ են՝ 3,11,17,23,30

ՅՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
Շատ հաւական է որ անկարելի դարձնես կարելի: Սակայն հետեւողական կամքդ քեզ հանգիստ չի ձգեր: սիրային գետնի վրայ շատ բախտաւոր պիտի ըլլաս:
Բախտաւոր թիւերդ են՝ 1,7,15,28,33

ԵՐԿՈՒՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
Շուտով եզրակացութիւններու կը յանգիս եւ իրողութիւնները չես ուսումնասիրեր: Բաւական ազատամիտ ես եւ ըստ այնմ կեանք մը կ'ապրիս: Հարազատներուդ մի բարկանար:
Բախտաւոր թիւերդ են՝ 5,13,18,21,27

ԽԵՅԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22
Ընտանիքդ ակնկալութիւններդ շատ են, սակայն քու կատարածներդ քիչ: Եսասիրութեամբ մի մտածեր եւ գատողի բաներու մասին շատ մի խօսիր: Փորձէ օրինակելի կեանք ապրիլ:
Բախտաւոր թիւերդ են՝ 14,25,28,32,35

ԱՌԻԹ Յուլիս 23-Օգոստոս 22
Բարոյապէս շատ մաքուր կեանք կը վարես, սակայն յաճախ դուն քեզ շատ կը զրկես հրճուանքերէ: Նիւթականը քեզի համար երբեք արժէք չի ներկայացներ եւ դրամին արժէքը չես գիտեր:
Բախտաւոր թիւերդ են՝ 7,16,25,29,34

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Մտերիմ բարեկամիդ հետ կապդ խզած ես եւ շատ անհանգիստ կը զգաս: Լաւ մտածէ իսկական պատճառներուն մասին եւ մի ընդդիմանար իրականութիւններուն:
Բախտաւոր թիւերդ են՝ 11,19,23,33,34

ԿՇԻՈՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Ամէն իրաւունքները ունիս հպարտանալու, սակայն շատ համեստ ես եւ ընկերային: Ձաւակներդ մղէ դէպի կեանքի ասպարէզ եւ քաջալերէ զանոնք ինքնավստահ ըլլալու: Ծառայասէր եղիր:
Բախտաւոր թիւերդ են՝ 2,8,16,24,27

ԿԱՐԻԾ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Կազմակերպչական աշխատանքներու մէջ առաջնակարգ տեղ կը գրաւես: Մեծագոյն ուրախութիւնդ գործիդ յաջողութիւնն է: Ընտանեկան պարագաներդ կարօտ են քեզի հետ զբօսանելու:
Բախտաւոր թիւերդ են՝ 6,13,27,30,32

ԱՂԵՂՍԱԻՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Յաճախ կը խօսիս այդպէս որ մարդիկ քեզ շատ կը սիրեն եւ կ'ուզեն մօտենալ քեզի: Կարճ ժամանակի մէջ որոշումներ կ'առնես գործադրելու նպատակով: Կեանքդ շատ բարեփոխուած է:
Բախտաւոր թիւերդ են՝ 2,11,25,34,35

ԱՅԾԵՂՋԻՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19
Վերջերս կեանքիդ մէջ մեծ փոփոխութիւններ եղած են: Գործդ իսկ փոխելու մասին լրջօրէն կը մտածես: Ապագայ շատ փայլուն է եւ ընտրութիւններդ ճիշդ:
Բախտաւոր թիւերդ են՝ 7,12,18,23,34

ԾՈՎԱՆՈՅԾ Յունուար 20-Փետրուար 18
Անձնական եւ ընտանեկան որոշումներ առնելը շատ դժուար կը թուի ըլլալ: Հարցի մը մասին շատ կը մտածես եւ անհանգիստ կ'ըլլաս: Անձի մը կարօտը կը քաշես որմէ հեռացած ես տարիներ առաջ:
Բախտաւոր թիւերդ են՝ 6,16,22,29,34

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
Իրաւունքներդ երբեք չես ուզեր պատշպանել, նոյնիսկ եթէ անիրաւ տեղ ամբաստանուած ես: Հեռու վայրեր երթալէ զգուշացիր գալիք օրերուն: Նիւթական շահերուդ վրայ լաւ կեդրոնացիր:
Բախտաւոր թիւերդ են՝ 2,19,28,30,33

ՅԱՆՈՒՆ ԻՆՉԻ

ԱԻԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Մեր արիւնտ պատմութեան մէջ, դարեր երազեցինք ունենալ ազատ, անկախ Հայաստան: Ունեցանք այդ: Ունեցանք բանակ, դրօշ, զինանշան, օրհներգ, նախագահ եւ խորհրդարան: Անմիջապէս անցանք Միացեալ Ազգերի Կազմակերպութեան մէջ: Այս բոլորից յետոյ փոխանակ կրկնակի դարձնելու մեր ճիգ ու ջանքը, լարելու մեր ուժերը, աւելի ու աւելի փարուելու մեր պապենական հողին ու ջրին, սկսեցինք լքել հայրենի հողը եւ նորից դառնալ թափառական: Ինչպէ՞ս կարողացանք մոռանալ հայրենի սրբավայրերը: Չէ՞ որ մենք այն ժողովուրդ ենք որ կարողացանք վերջնական հարուած տալ թշնամուն եւ տէր դառնալ Արցախին: 1946 թուին Իրանի Փերիա, Չարմահալ գաւառներէ, ինչպէս նաեւ Արաքի շրջանի Ազնա, Քալաւա գիւղեցից հազարաւոր հայեր հայրենադարձուցին երկիր եւ լծուեցին շինարար եւ ստեղծագործ աշխատանքի: Հպարտանքով կարող եմ ասել որ անկախութիւնից յետոյ հայրենիք վերադարձած հողագործներից շատ քչերը թողին երկիրը: Նրանք մնացին ու այսօր էլ ցանում ու հերկում են մեր հողը: Շատերն աւարկում են որ Հայաստանում գործ չկայ: «Գործ անողի համար միշտ էլ գործ կայ» ասում է ժողովրդական առածը: Ստեղծագործ հայ ժողովուրդը քարից հաց է քամել, խոպանն է հերկել, դրամ վաստակել: Այսօր հազարաւոր հայ ազատամարտիկների երեխաներ մնացել են անպաշտպան եւ անօթեւան: Ո՞վ պիտի մտածի սրանց մասին: Պետութեան կողմից չստակացուած նպաստը շատ քիչ է, որովհետեւ նրա հնարաւորութիւններ էլ սահմանափակ են եւ

մասամբ անտեսուած են կարօտեալ ընտանիքները եւ նրա գաւակները, ինչպէս նաեւ ազատամարտիկները: Իրանահայ հողագործները ամբողջ տարին չարչարում էին իրանական գիւղերում եւ դաշտերում, բերք ստանում եւ դրակէսը տալիս էին գիւղատիրոջը (Արբաբ): Միթէ՞ մոռացուեցին այդ օրերը: 1993 թուին ես Հայաստանում էի, Գիւմրիից մինչեւ Ղարսի սահմանը մօտ 20 քիլոմէթր տարածութեան վրայ ցորենի արտեր էին ծփում, սակայն հեց դրանց մօտով մարդիկ անտարբեր գնում էին Թուրքիա աշխատանք գտնելու: Առաջարկում էի ծանօթ մտերիմներին գնալ Արցախ եւ այնտեղ զբաղուել վար ու ցանքով, հողը պարարտ է եւ բերքատու: Հայ հողագործը մոռացել է թէ օտարի հողում ինչպէս էր քրտնաջան աշխատում եւ վաստակի կէսը տալիս գիւղատիրոջը: Հիմա ինչո՞ւ չի ուզում վարել ու ցանել հայրենի հողը: Հայաստանից անհետ հեռացողները մասամբ կացինահարում են մեր տոհմական ծառի արմատներին: Դուք հայրենաբնակ հայեր, դուք էք հայրենիքի տէրն ու պաշտպանը: Դուք էք մեր սահմանապահները: Բարեբախտաբար տարիների դժուարութիւնները մասամբ անցել են: Յուսանք որ շատ մօտ ապագայում կը վերանան նաեւ նշմարուող թերութիւնները եւ մեր ժողովուրդը մէկ մարդու պէս ոտքի կը կանգնի, եւ շնորհիւ իր բնածին տաղանդի եւ աշխատունակութեան կը ստեղծի իր ազատ, անկախ եւ հզօր հայրենիքը, բառի ամենալայն առումով: Մեր ժողովուրդը պիտի ինքնուրոյն դառնայ: Մեզ պէտք է են օտարների օգնութիւնները: Մենք պիտի տնօրինենք մեր ճակատագիրը:

**Ն.Ա.Ս.Ս ԱՐՈՒԵՍԻ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ**

Կը Կազմակերպէ

ԱՍՍՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՅԵՆԵՐ

Տարիքային Բոլոր Խումբերու Համար

Դեկավարութեամբ՝

Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր,

Ասմունքող եւ Շեռուստալրագրող

ՆՈՒՆԵ ԱԻԵՏԻՍԵԱՆԻ

Փորձերը տեղի կ'ունենան

ԿԿԲՍ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ

1060 N.Allen Ave. Pasadena, CA 91104

Արձանագրութեան Համար Դիմել՝

Տիկ. Արմինէ Լաշինեանին Դեռ. 626-372-4662

Պր. Յարութ Տրվիչոյլեանին Դեռ. 323-351-8001



Պէյրուօթի Մէջ Տեղի Ունեցաւ

Շարունակուած էջ 7-էն

ՀԿԲՄ Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոյէճի տնօրէն Ընկ. Նազարէթ ձէրէճեան իր խօսքին մէջ պատիւ համարեց «Մեծ» Քամներուն մասին խօսելը: «Անոնց պարագային՝ Մահ իմացեալ անմահութիւն էր: Քամները ինքնապատահ քայլերով իրենց ազգանուէր աշխատանքը կատարեցին, քաջ գիտնալով, որ մատնուած են եւ իրենց կը սպասեն կախաղանները: Պատիւ է խօսիլ Քամներու նահատակութեան մասին, որովհետեւ անոնք ո՛չ միայն տեղաշարժեցին աշխատաւորական շարքերը, այլ դարձան իթթիհատի յետագայ ծրագիրները բացառապէս ռազմականները, կախաղան բարձրանալով ցանցերին անոր դէմ պայքարի հունտը», ըսաւ Ընկ. ձէրէճեան: Անոր խօսքով, Հայոց պատմութեան մէջ շատ եղած են կախաղաններ եւ նահատակներ, սակայն Քամներուն հերոսութիւնը դարձած է ուսանելի երեւոյթ: «Ինչպիսի քաղաքական հոտառութիւն եւ հեռատեսութիւն պիտի ունենար միայն 26 տարեկան կուսակցութիւն մը, հասկնալու համար ճիւղաղին իսկական՝ յետին նպատակները:

Յաջողութեամբ բերեցա՞նք քաղաքական վերլուծութիւն մը, որ աշխարհի բազմաթիւ շրջաններու մէջ, բազմաթիւ փորձառու ուժեր տակաւին չեն կրնար իրականացնել մինչեւ օրս, հանդիպելով աղէտալի հետեւանքներու», ըսաւ ան:

ՄԴՀԿ Լիբանանի շրջանի վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան անդրադարձաւ Քամներու պատգամին, անարդարութեան դէմ անոնց պայքարին, հայութիւնը ջնջելու քաղաքականութեան տապալումին եւ մերժողականութեան դէմ դնելու ուղեգիծին: Ընկ. Թիւթիւնճեան իր խօսքին մէջ կեդրոնացաւ մասնաւորաբար մերօրեայ խնդիրներուն վրայ:

«Մեզի համար այսօր հիմնական օրակարգ է մեր անկախ Հայրենիքին ամրապնդումը, հերոսական Արցախի անվտանգութեան ապահովումը եւ Լիբանան հայրենիքի քաղաքական հարցերու լուծումն ու յաւելեալ բարգաւաճումը: Այս ոգիով գործեցինք տարիներ շարունակ ու այս ոգիով պիտի շարունակենք մեր ճամբան», ըսաւ Ընկ. Թիւթիւնճեան:

Խօսելով Արցախի վերջին զարգացումներուն մասին, Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան դիտել տուաւ, որ Ատրպէյճան պատրաստ չէ խօսելու խաղաղութեան լեզուով, այլ իր ամբողջ ներուժը կը տրամադրէ համալրելու գինուորական կարողութիւնները եւ Արցախի հարցը լուծելու ռազմական միջոցներով: «Այս բոլորին դիմաց, յիստորացած չենք ըլլար եթէ ըսենք, որ հայոց բանակը փայլուն կերպով կատարեց իր վրայ եղած պարտականութիւնը: Մեր

հերոս ու արի գինուորները ցոյց տուին, թէ ինչպիսի ոգի կը կրեն եւ պատրաստ են ամէն գինով պաշտպանել հայրենի հողը: Ճիշդ է, եղան կորուստներ եւ զոհուիք ալ չէ, որ այդ կորուստներուն երեւելի մասը արդիւնք էր բացթողումներու եւ սխալներու: Այսօր այդ սխալները սրբազնելու ժամանակն է ու այդ գործընթացով միայն կարելի է ամրագրել Արցախի ու Հայաստանի հերոսական բանակի յաղթանակին բոլոր երեսները», ըսաւ Ընկ. Թիւթիւնճեան:

Անդրադառնալով հայաստանեան նորագոյն զարգացումներուն եւ հայրենիքի մէջ տիրող վիճակին, Ընկ. Թիւթիւնճեան նշեց, որ այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է կառավարական մակարդակի վրայ առկայ սխալները սրբազնել, մինչ Սփիւռքը պատրաստ կը մնայ նեցուկ կանգնելու Հայաստանին:

«Միանութիւնը ընկերներ, լոկ խօսք չէ, միանութիւնը գործ է ու այսօր Հայրենի իշխանութիւնները պէտք է իրենց բոլորանուէր օրինակով այդ միանութեան համար նոր ճանապարհներ բանան», նշեց Ընկ. Թիւթիւնճեան: Անոր խօսքով, Միջին Արեւելքի հայութեան անվտանգութիւնը կարմիր գիծ կը համարուի, իսկ Լիբանան այն օղակն է, որ կը համարուի շրջանի հայութեան պաշտպանութեան վերջին բերդը: «Միասնութեան գաղափարով ամրագրուած մեր աշխատանքները բերդը պիտի պահեն ամուր եւ ապահով: Մեզի համար աթոռներէն եւ պաշտօններէն անդին կենսական է լիբանանահայութեան անվտանգութեան խնդիրը ու մենք, որպէս Հնչակեաններ, այս առումով եւս կը մնանք պատրաստակամ», նշեց Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան:

Այն ինչ կը վերաբերի լիբանանեան քաղաքական տեղական զարգացումներուն, Լիբանանի շրջանի վարիչ Մարմնի ատենապետը խօսեցաւ քաղաքական տաղանակի շրջանցումին, ընտրական օրէնքին, քաղաքական դաշինքներուն եւ ապօրինի գէնքին մասին: Ընկ. Թիւթիւնճեան անյետաձգելի համարեց նոր նախագահի ընտրութիւնը, կոչ ուղղելով վերջ տալ խոչընդոտումին, որովհետեւ առանց նախագահի Լիբանան ենթակայ է մեծ վտանգներու: Անոր համաձայն, պէտք է ընտրութիւններու ընթացքին վերացնել ապօրինի գէնքին ազդեցութիւնը երկրին մէջ: Շեշտելով քաղաքապետական ընտրութիւններուն կուսակցութեան ընտրաան մեքենայի կատարած փայլուն աշխատանքը, Ընկ. Թիւթիւնճեան ըսաւ. «մենք եւս պատրաստ ենք խորհրդարանական ընտրութիւններուն, որեւէ ձեւաչափի տակ, որեւէ օրէնքով, միայն թէ յարգուի քաղաքացիին ազատ ընտրելու սրբազան իրաւունքը: Թաքցնելու բան ալ չունինք մեր քաղաքական

դաշինքներուն մասին: Մենք չենք թաքցնում մեր կեցած քննարկները եւ ինչպէս երէկ, այսօր ալ հպարտ ենք մեր դաշնակիցներով: Մեզի համար նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ըմբռնումներուն մէջ եղած Լիբանանը անսակարկելի է: Մենք կը հաւատանք այդ Լիբանանին: Մենք կը հաւատանք համակեցութեան եւ արդարութեան ձգտող եւ Քրիստոնեայ-Իսլամ համակեցութեան խորհրդանշ դարձած Լիբանանին»:

Լիբանանի շրջանի վարիչ Մարմնի ատենապետը նաեւ երիտասարդներուն կոչ ուղղեց պատրաստուելու ջահի ատանձումին: Անոր խօսքով, գալիք օրերու պայքարը տարբեր պիտի ըլլայ անցեալի պայքարներէն, հետեւաբար պէտք է կարելի ըլլայ չարութեան դէմ դնել յեղափոխական բարութեամբ: «Մենք կը հաւատանք մեր շարքին ու մեր հազարաւոր համակիրներուն: Գաղափարական իր սնունդը Քամներու շաղախով ամրագրած կուսակցութեան համար չկան անհասանելի բարձունքներ: Քամներու կամքով ապրող Հնչակեաններուս համար չկան անկարելի նպատակներ: Այսօր այդ ոգիով պիտի քայլենք», եզրափակեց Ընկ. Թիւթիւնճեան:

Հնչակեան Քամն անմահներուն նուիրուած պաշտօնական հանդիսութիւնը եզրափակուեցաւ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի պատգամով եւ «Պահպանիչ»ով: Ան նշեց, որ Քամները անկասկած Հայոց

պատմութեան էջերուն մէջ ունին իրենց իւրապատուկ տեղը եւ Քամները, որ կախաղանի նահատակութեամբ իրենց կեանքը կնքեցին, կը պատկանին հայ ժողովուրդի ամբողջութեան, որովհետեւ մեր գերագոյն շահերուն համար իրենց կեանքը նուիրեցին, որպէսզի մենք մեր կեանքը շարունակենք նոյն հայրենիքի սիրով: «Վայ այն ժողովուրդին, որ կը մոռնայ իր պատմութիւնը, իր հերոսներն ու նահատակները, իր մեծութիւնը կը փնտռէ առանց կառչելու իր արմատներուն: Վայ այն ժողովուրդին, որ կը մոռնայ պատրաստուելի վաղուան, որ ձեռք կը բերուի պայքարով: Սիրելի երիտասարդներ, թող Քամներու օրինակը ըլլայ նաեւ ձեր կեանքի օրինակը: Այդ օրինակն է, որ մեզ կը կապէ հայրենիքին, մեզ կ'առաջնորդէ սիրով եւ նուիրումով ծառայել մեր ժողովուրդին», ըսաւ Առաջնորդ Սրբազանը: Ան մաղթեց, որ Աստուած վառ պահէ մեր նահատակներուն լիշատակը եւ անոնց օրինակը կենդանի պահէ մեր կեանքին մէջ, որպէսզի Սփիւռքի մէջ, ի խնդիր հայութեան եւ ի սէր հայրենիքին, մենք ալ նուիրումով եւ սիրով մեր կեանքը արդիւնաւորենք նորանոր գոհորդութիւններով:

Հանդիսութեան պաշտօնական բաժինի աւարտէն ետք բեմ բարձրացաւ լիբանանահայ երգիչ Պերճ Նազգաշեան, որ իրեն ընկերակցող նուագախումբին հետ ներկայացուց ազգային յեղափոխական երգերու փունջ մը:

Վերաբանակցիլ Թոյլատրելիին Սահմաններուն Շուրջ

Շարունակուած էջ 13-էն

հետեւողական ծրագիր մը գոյութիւն ունեցած չէր երկար ժամանակի վրայ:

Ուրիշ հարցում մը վազգէն Ա. Կաթողիկոսի ունեցած դերին մասին էր՝ ցոյցերուն ընթացքին: Տոքթ. Սափարով պատասխանեց, թէ Կաթողիկոսը, քաջ գիտնալով խորհրդային զօրքերու ներկայացուցած հնարաւոր վտանգը, ամենայն հաւանականութեամբ ձեռնարկած էր բազմութիւնները հանդարտեցնելու, աւելի քան կիրքերը հրահրելու: Ան նաեւ մանրամասնեց, թէ ինչպէ՞ս ցոյցերը հողային պահանջ եւ ցեղասպանութեան ոգեկոչում միաձուլած էին: Սափարով հաստատեց, որ ցոյցերէն անմիջապէս ետք, հազարաւոր ստորագրութիւններով քանի մը նամակներ ուղարկուած էին Մոսկուա՝ պահանջելով

Ղարաբաղի վերադարձը Հայաստան, ինչ որ ցոյց կու տայ, թէ ինչպէ՞ս երկու հարցերը միացած էին իրարու: Վերջապէս, ան նշեց, թէ խորհրդային իշխանութիւնները, խորհրդանշական կերպով, փորձած էին վարկափրկել Անդրանիկը, որ թէեւ մէկ կողմէ նկատուած էր կողմնակալ թրքական բնակչութեան դէմ պայքարած մարտիկ մը, միւս կողմէ քաղաքացիական պատերազմի շրջանէն միակ անձն էր, որ հակառուսական պայքար տարած չըլլալով կրնար վերականգնումի ենթարկուիլ: Անդրանիկի ծննդեան 100ամեակը նշուած էր Փետրուար 1965, զինք ոգեկոչող յօդուածներու հրատարակութեամբ: Յեղասպանութեան լիշատակումին մօտ ըլլալով, այս վերականգնումը բնակչութեան ուղղուած յստակ պատգամ մըն էր, թէ այժմ կարելի էր խօսիլ այնպիսի բաներու մասին, որոնք թոյլատրուած չէին նախօրօք:

ՎԱՐՉՈՒ ՏՈՒՆ

Փասատիմայի լաւ շրջանի մէջ վարձու է 2 Գնջարան, Գստասեմեակ, բաղնիք, սառնարան եւ լուացքարան: Duplex տուն:

Ամբողջութեամբ վերանորոգուած:

Վարձքի մէջ Գերառեալ է (utility) Ելեքտրականութիւն, gas, ջուր եւ աղբ:

Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ Գէրին 626-449-0888:

Director of Fellowship Ministry Position

"St. Gregory Armenian Church of Pasadena is looking for applicants for a full-time position as Director of Fellowship Ministry. It requires organizing committees and teams of volunteers to plan, develop and execute parish activities. For more information, please call the parish office at 626-449-1523."

Վերջին Միջնաբերդի Փլոնը

Շարունակուած էջ 6-էն

ծէ ո՛չ միայն Գերմանիոյ հետ իր յարաբերութեան առումով, այլեւ ամբողջ Եւրոպայի՝»:

Գժուար է հիմնադրել այս կարծիքին հետ եւ այս կարծիքին կողմնակիցները նոյնպէս մեծաթիւ են, սակայն կայ նաեւ տրամագծօրէն հակառակ կարծիքը, առ այն, որ մենք՝ հայեր, պէտք է ապաւինինք միայն մեր զօրութեան եւ մերժենք որեւէ երրորդ ուժի ներկայութիւն՝

երբ ազգի համար ճակատագրական խնդիրներ կը լուծենք:

Բացակայ է միայն պետականութեան յստակ ռազմավարութիւնն ու դիրքորոշումը, որ իրական ու մեծ միասնութեան մասին հնչող ամպագոռգոռ կոչերէն շատ աւելի կարեւոր է ու պարտադիր: Պարտադրողը այս պարագային ո՛չ լրագրողն է, ո՛չ ընթերցողը, ո՛չ ալ ժողովուրդը: Պարտադրողը մեր պատմութիւնն է ու ժամանակի հրամայականը:

ՌԱՅՈՒԱ. «ԲՈՐՈՒՄԻԱՆ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆԸ «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԵԴ»

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդը» շարունակում է ջանք գործադրել Հայաստանի հաղթանակների կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի տրանսֆերը ընդունելու ուղղությամբ, սակայն Դորտմունդի «Բորուսիան» փորձում է խոչընդոտել այդ տեղափոխությունը, հաղորդում է BBC-ն՝ յղում անելով հայ ֆուտբոլիստի գործակալ Մինո Ռայոլային:



«Միայն կը լինէր դադարեցնել բանակցությունները: Ես դրական եմ տրամադրուած: Եթէ վատա՛հ չլինէի, որ կարող եմք հասնել ինչ-որ լուծման, չէի էլ փորձի: Ես շատ հպարտ եմ, որ «Մանչեսթեր Եունայթեդը» ցանկանում է Մխիթարյանի տրանսֆերը, բանակցություններն ընթանում են լաւ մթնոլորտում, սակայն «Բորուսիան» դեռ դէմ է», - ասել է Ռայոլան:


Իտալացին նաեւ շուէտ յարձակուող Զլատան Իբրահիմովիչի գործակալն է: «Մանչեսթեր Եունայթեդը» ցանկանում է պայմանագիր կնքել նաեւ Իբրահիմովիչի հետ, որն ունի ազատ գործակալի կարգավիճակ:

ՊՍԺ-ն 50 միլիոն եւրո աշխատավարձ է առաջարկել Նէյմարին: Փարիզի ՊՍԺ-ն ջանք է իննաչում թիմի համար նոր աստղ ձեռք բերելու համար: Շուէտ Զլատան Իբրահիմովիչի հեռանալուց յետոյ ֆրանսական թիմը կը մնայ առանց համաշխարհային մակարդակի աստղի: «Բարսելոնայի» պրագմատիկ յարձակուող Նէյմարին գրաւելու համար ՊՍԺ-ն պատրաստ է նրան դարձնել աշխարհի ամենաբարձր վարձատրուող ֆուտբոլիստը: ՊՍԺ-ն հերթական առաջարկն է արել 24-ամեայ յարձակուողին՝ տարեկան 50 միլիոն եւրո աշխատավարձ, հաղորդում է telefoot-tf1-ը:

«Բարսելոնայի» հետ պայմանագրում (նախատեսուած է մինչեւ 2018 թուականը) Նէյմարի ամրագրուած տրանսֆերային արժէքը (190 միլիոն եւրո) ՊՍԺ-ն եւս պատրաստ է վճարել: Այս տարուայ Մայիսին Նէյմարը մէկ անգամ արդէն մերժել է ՊՍԺ-ին, սակայն Սպանիայի հարկային մարմինների հետ չաւարտուող դատավարութիւնները կարող են Նէյմարին դրդել հեռանալ «Բարսելոնայից»:

ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ԿՈՐԸ «ՌԷԱԼ ՍՈՒԹ ԼԵՅՔԻՆ» ՓՐԿԵՑ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԻՑ

Հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի առաջնութեան հերթական խաղում «Ռէալ Սուիթ Լէյքը» ընդունել է «Պորտլենդ Թիմբերսին» եւ չի կարողացել յաղթանակ տանել: Դաշտի տէրերին պարտութիւնից փրկել է Հայաստանի հաւաքականի յարձակուող Եուրա Մովսիսեանը, որը դիպուկ է իրացրել 11 մեթրանոցը: Հայ յարձակուողն էլ վաստակել էր 11 մեթրանոցի իրաւունքը: Հանդիպումն աւարտուել է ոչ ոքի՝ 2:2:



«Ռէալ Սուիթ Լէյքը» 14 խաղից յետոյ 24 միաւորով Արեւմուտքի երրորդ տեղում է: 3-6-րդ տեղերն ապահովում են տեղը 1/8 եզրափակիչում: Կանոնաւոր առաջնութեան արդիւնքում առաջին երկու տեղերը գրաւած թիմերը պայքարը կը շարունակեն քառորդ եզրափակիչում:

ՌԻՕ-2016. ՀԱՅԱՍՏԱՆԻ 28-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԿԱՆԸ

Աթլետիկայի միջազգային ֆեդերացիան հաստատել է վազորդ Լիլիթ Յարութիւնեանի օլիմպիական ուղեգիրը: Յարութիւնեանը նորմատիւր կատարել էր Արտաշատում անցկացուած Հայաստանի առաջնութեան ժամանակ 400 մեթր արգելափակքում, հաղորդում է ՀԱՕԿ լրատուականը:




Աթլետիկայի Հայաստանի հաւաքականից օլիմպիական ուղեգրեր ունեն նաեւ վազորդներ Դիանա Խուբեսերեանը, Գայեանէ Չիլոյեանը, Եռացատկորդ Լեւոն Աղասեանը եւ հեռացատկորդ Ամալիա Շառոյեանը:

Հայաստանն ունի Օլիմպիական խաղերի 28 ուղեգիր:

ՄԵՍԻՆ ԿՐԿՆԵՑ ԲԱՏԻՍՏՈՒՏԱՅԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ


Ֆուտբոլի Արժենթինայի հաւաքականի եւ «Բարսելոնայի» յարձակուող Լիոնէլ Մեսին Ամերիկայի գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչում վենեզուելայի դարպասը գրաւելու շնորհիւ կրկնեց Գաբրիէլ Բատիստուտայի ռեկորդն ազգային հաւաքականում՝ 54 կոլ: Արժենթինան յաղթել է 4:1 հաշուով:



«Ինձ համար կարեւոր է դառնալ հաւաքականի լաւագոյն ումբարկուն, քանի որ խօսքը Բատիստուտայի ռեկորդի մասին է: Բայց դրանից առաւել ինձ ուրախացնում է խումբի յաջողութիւնը՝ մենք արդէն կիսաեզրափակիչում ենք: Բոլորս դուրս ենք գալիս խաղադաշտ հերոսանալու համար: Մենք արդէն երկու անգամ անընդմէջ դուրս ենք եկել խոշոր մրցաշարերի եզրափակիչ: Յոյս ունեմ, որ կը լինի նաեւ երրորդ եզրափակիչը», - Մեսիի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

Աշխարհի եւ Հարաւային Ամերիկայի նախորդ առաջնութիւնների եզրափակիչներում Արժենթինան պարտուել է:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԱՒԱԹ. ԽՄԲԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ



Goal.com-ը կազմել է ԱՄՆ-ում ընթացող Ամերիկայի գաւաթի խաղարկութեան խմբային փուլի խորհրդանշական հաւաքականը:

Դարպասապահ. Դանիէլ Հերնանդէս (վենեզուելա):

Պաշտպաններ. Նիկոլաս Օտամենդի (Արժենթինա), Ռաֆայէլ Մարկէս (Մեքսիքո), Կրիստիան Սապատա (Գոլուձպիա), Միգէլ Լայուն (Մեքսիքո):

Կիսապաշտպաններ. Արտուրո Վիդալ (Չիլի), Ալեխանդրո Գերա (վենեզուելա), Խեսուս Կորոնա (Մեքսիքո), Խամես Ռոզորիգէս (Գոլուձպիա):

Յարձակուողներ. Կլիսո Դեմպսի (ԱՄՆ), Լիոնէլ Մեսի (Արժենթինա):

ՌԱՖ-Ի ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄԸ ԶԻ ՓՈՆՈՒԵԼ, ՌՈՒՍ ԱՐԼԵՏՆԵՐԸ ԶՐԿՈՒԱԾ ԵՆ ՌԻՕ-2016-ԻՑ


Աթլետիկայի միջազգային ֆեդերացիան ուժի մէջ է թողել Ռուսաստանի աթլետիկայի ֆեդերացիայի որակագրկման որոշումը, որն ընդունուել է 2015թ. Նոյեմբերին դոպինգային սկանդալներից յետոյ:

Համաշխարհային հակադոպինգային գործակալութիւնը մեղադրել էր Ռուսաստանի աթլետիկայի ֆեդերացիային հակադոպինգային կանոնների խախտման մէջ՝ զրկելով արտօնագրերից Ռուսաստանի հակադոպինգային կազմակերպութիւնն ու Մոսկուայի հակադոպինգային լաբորատորիան:

Ռուսաստանին չ'օգնեց նաեւ աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ Վալենտին Բալախնիչէւի հրաժարականը:

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ՀԱՅ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿԸ ՀՐԱԺԱՐՈՒԵԼ Է ՄԵԿՆԵԼ ՊԱՔՈՒ

Բռնցքամարտի Չեխիայի հաւաքականը ներկայացնող էրիկ Աղաթելեանը հրաժարուել է մեկնել Պաքու, որտեղ Յունիսի 16-25-ը կ'անցկացնի օլիմպիական վարկանիշային մրցաշար:



«Էրիկը լաւ մարզավիճակում է հիմա, բայց ես նրան հասկանում եմ: Նման որոշում են ընդունել նաեւ Գերմանիան ներկայացնող հայ բռնցքամարտիկները», - ասել է Չեխիայի բռնցքամարտի ասոցիացիայի նախագահ Սվիտոսլավ Զաչեկը:

Պաքուում կայանալիք մրցաշարին մասնակցելուց հրաժարուել էր նաեւ Ուկրանիայի հաւաքականի առաջատարներից Եւրոպական խաղերի փոխախոյեան Գէորգ Մանուկեանը:

Հայաստանի հաւաքականը նոյնպէս չի մասնակցի Պաքուի մրցաշարին: